

# ՄՇՏԱՄՐՄՈՒՆՋ ԱՂՕԹԱՍԱՑՈՒԹԻՒՆ

ԵՒ

## ԼՈՒՌ ՀՍԿՈՂՈՒԹԻՒՆ

1. ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ ԿԱՆՉՈՂԻՆ ՁԱՅՆԸ
2. ՄԱՆՐԱՇԽԱՐԿ
3. “ՓԱԿԷ՛ ԴՈՒՌԴ”
4. “ՄԻՆՉԵՒ ԿԻՄԱ ԻՄ ԱՆՈՒՆՈՎՍ ՈՋԻՆՉ  
ԽՆԴՐԵՑԻՔ”
5. “ԿԱ՛ՅՐ, ՆԵՐԷ՛ ԱՏՈՆՑ, ՈՐՈՎԿԵՏԵՒ ՉԵՆ  
ԳԻՏԵՐ ԹԷ ԻՆՉ Կ՛ԸՆԵՆ”
6. ԱՂՕԹԵԼ՝ ԿՈԳԵԿԱՆ ԵՒ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑԱԿԱՆ  
ՎԵՐԱՑՈՒՄ ԴԷՊԻ ԱՍՏՈՒԱԾ
7. ԱՂՕԹԵԼ ՅԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆՈՎ

EVER PRAYING AND EVER SILENT

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

2001

# Ե Ր Կ ՈՒ Ի Խ Օ Ս Ք

Մեր պապերն ու անոնց նախնիները «Ո՞վ ես, Ի՞նչ ազգից ես» հարցին սովորաբար պատասխանած են՝ «Հայ Բրիստոնեայ ելն»: Իսկ եթէ անոնց ազգակիցներէն մէկը սխալ բան մը ըրած է, զարմացեր ու հանդիմաներ են՝ «Հայ Բրիստոնեայ չե՞ս»:

Հայ կեանքի ու ինքնաճանաչման այս հատկանշանական իրողութիւնը շատ ալ հեռու չէ մեզմէ, պարզապէս մի փոքր ետ նայիլ, մի փոքր "պեղումներ" կատարել սեփական հոգիի մէջ, ընթերցել ու վերընթերցել Աւետարանը՝ զգալու համար, թէ որքան խորը հետք է ձգած Բրիստոնէութիւնը մեր ազգային կերտուածքի վրայ ու դարձած է անոր ամենավեհ և մաքուր հատկանիշներու շաղախը:

Սիրելի Ալպէռ, անշուշտ դժուար է յօդուածի մը շրջանակի մէջ համապարփակ երկու խօսք ըսել քիչ անցած ուղու, որոնումներու, պրպտումներու և նախասիրած թեմաներու դմասին, ինձ ծանօթ մի քանի տասնեակ աշխատութիւններու կողքին, Աստուածային իմաստութեան անհուն փափաքով կարողացար Բրիստոնեայ ընթերցողին ընծայել մեկնութիւններուդ անգնահատելի ընտրանի մը ես:

Խոր հաճոյքով ընթերցեցի "Մշտամրմունջ Աղօթասացութիւն եւ Լուռ Հսկողութիւն" վերնագրուած վերջին գրքոյկդ, անոր մէջ հաճախ ոչ թէ դաւանանքի բուրմունք զգացի, այլ աղօթքի անուշահոտութիւն: Բացառիկ կարողութեամբ ըմբռնած էք աղօթքի զօրութեան իմաստը, և կը նկարագրէք աղօթքի խորուրդը իր ամբողջութեամբ: Ձեր գրելաւոճին համահունչ բառերուն մէջ չկայ ոչ մէկ աննպատակ խօսք: Միակ Բրիստոնէն ստացած էք այս շնորհը, որ ուսումով և կամ պաշտոնով ձեռք չի բերուիր:

Բրիստոնի հետ ձեր մշակած աղօթքի սերտ հարաբերութեան շնորհիւ է, որ ունիք զգայուն ոգի մը, և այն կը բացայայտուի պարզ ու անկեղծ ոճով:

Մենք բոլորս ալ բնածին սէր ունինք մեր մէջ, սակայն մասնաւոր մէկը սիրելը աւելի ուշադրութեան և զոհողութեան կը կարօտի, և այդ կու գայ իրար ծանչնալով և կատարուած գործերուն հաւատալով: Իսկ առանց անանձնական և անկեղծ սէր ունենալը մեր մէջ կը զարգանայ աղօթքով և Աստուծոյ շնորհներով, որ մեզի տրուած երկնային պարգեւ մըն է:

Սիրելի Ալպէռ այս ներշնչումները ձեր մտային և հոգեկան կարողութիւնները միացնելով Բրիստոնեային կառաջնորդէ լոյսի ու աղօթքի ծամբայէն, ուր ցոյց կու տաք աղօթքի անհրաժեշտութիւնը, որ կեանքի ճշմարիտ արժէքն ու իմաստն է, և այն կը լուսաւորուի ու

կը ծնի աղօթքի կեանքէն:

Ու ներկայ ժամանակներու մոլորումներով ախտաւոր այս աշխարհին մէջ, ուրիշ ի՞նչ ներշնչում աւելի կենսատու և գօտեպնդիչ պիտի ըլլար քան «Հոգւոյն հորիզոնէն միայն իմացուող ձայնը. Լոռութեան ձայնը»:

Ծարունակեցէ՛ք ձեր խորհրդածութիւնները պարկեշտ Քրիստոնեայի պրպտող մտքով:

Յաջողութեան և Աստուծոյ լիառատ օրհնութեան անկեղծ մաղթանքներով՝

Սեդա Գանտահարեան

Տնօրէնուհի Ս. Ե. Հ. Ա. Եկեղեցւոյ  
Կիրակնօրեայ Վարժարանի

Սեպտեմբեր 2001

# ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ ԿԱՆՉՈՂԻՆ ՁԱՅՆԸ

Որեւէ տեղ և ժամանակ կարելի է անապատային դառնալ կամ դարձուիլ: Անապատ բառը կը նշանակէ՝ ամառ, անշէն և անբնակ: Սակայն մարդաշխարհի երեք մեծագոյն կրօններու հիմնադիրները՝ Մովսէս, Յիսուս և Մուհամէտ, իրենց առաքելութեան սկիզբը, անապատ փաշուեցան:

Ներկայ դարու գիտնական հանճարները փառաբանելու գան ուսանելու և սորվելու: Ի՞նչ է արդեօք այն կախարդական հրապոյրը որ անապատը կը շնորհէ վեհանձն մարգարէներուն որ փառաբան շէնշող և ընկերային կեանքը չի կրնար պարզուել: Ինչո՞ւ բազմաթիւ սուրբեր որդեգրեցին վանական կեանքը կամ կուսակրօն մենակեցութիւնը, ինչպէս Ս. Օգոստինոս, Ս. Հերենիմոս, Ս. Մեսրոպ Մաշտոց և Խրիմեան Հայրիկ և շատ մը ուրիշներ:

Քաղաքի մը ընկերային և շէն կեանքը կրնայ տալ խայտանք, խանդավառութիւն և հրճուանք: Սակայն՝ այն անձերը, որոնք կ'ուզեն գտնել կեանքի իմաստը, ապրելու նպատակը կամ իրենց կեանքը դարձնել ստեղծագործ և բեղմնաւոր, անապատձա՛ն երթալու են անապատ: Միջոց մը, ժամանակ մը փաշուելու են ընկերային շէն կեանք կոչուած հեշտամուլ հաճոյքներէն:

Կեանքի զուարթութիւնները և հաճոյքները ըլլան հմայիչ և հաճելի, նման են փաղցրանոյշ խմորեղէններու որոնք միայն փիմք կը հաճեցնեն ու չեն կրնար մարմինը սնուցանել:

Մարդ՝ թէպէտ ընկերային արարած մըն է, սակայն իր առաքելութիւնը ծանօնալու, իր կեանքի նպատակը գտնելու և այդ նպատակին ուխտաւորը դառնալու համար, պարտաւոր է երթալ անապատ ամառ, անշէն և անբնակ կարծուած միայնութեան, ուր **պիտի՛** հանդիպի իր ինքնութեանը և զայն շնորհող Արարիչին:

Չարը կամ Սատանան երբեք չեն ուզեր որ մարդ առանձնութեան պահեր ունենայ, որովհետեւ միայն առանձնութեան մէջ մարդ կրնայ խորհրդածել: Գիտական հանճարի մեծագոյն ստեղծագործութիւնները հեռատեսիլի, համակարգիչի կազմածները և բազմաթիւ նորութիւններ, որքան ալ ըլլան կախարդական և դաստիարակչական, նոյնքան ալ արգելք են, որ մարդ կարենայ առանձնանալ ու մենութեան պահեր վայելել:

Անապատը՝ թէեւ փարանձաւներու, կիզիչ արեւի և անջրդի աւազներու միջավայր մըն է, սակայն կրնայ բնազանցական և հոգեմտաւոր վիճակ մը դառնալ 20րդ դարու լուսաւորեալ մարդուն:

Յիսուս՝ երբ աղօթել սորվեցուց Իր աշակերտներուն՝ ըսաւ.  
«Մտի՛ր սենեակդ, փակէ՛ դուռդ և աղօթէ Հօրդ ծածուկ,  
և քու Հայրդ որ կը տեսնէ ծածուկ՝ պիտի վարձատրէ  
քեզ»--Մատթ. 2.6:

Ուրիշ առթիւ Յիսուս անուղղակի ակնարկութիւն կ'ընէ անոնց  
որոնք կեանքի նպատակը կը հետապնդեն,

«Մտէ՛ք նեղ դուռէն, վասնզի լայն է դուռը և  
ընդարձակ է այն ճանապարհը որ կը տանի դէպի կորուստ,  
և շատեր են որ անկէ կը մտնեն: Որքա՛ն անձուկ է այն  
դուռը և նեղ է ճանապարհը՝ որ կը տանի դէպի կեանք, և  
քիչեր են որ կը գտնեն զայն»--Մատթ. 7.13:

Ի՛նչ յստակ և ըմբռնելի պատգամներ կու տայ Յիսուս, լսող  
ականջներուն:

«Մտի՛ր սենեակդ, փակէ՛ դուռդ»: Որ ըսել է 20րդ դարու  
մարդուն. "Գնա՛ անապատ", ինքզինքդ գտնալու համար՝ առանձ-  
նացի՛ր, միստիկ պրպտումներու ոլորտը մտիր: Ճակատագրին  
խորհրդաւոր բանալին գտիր: Աչքի և մտքի՛ տեսողութեամբ դիտէ  
աննիւթական և հոգեղէն խորհուրդները որ շարժապատկերի նման  
պար կը բռնեն մեծ խորհուրդի վարագոյրին առջեւ: Հոգւոյն  
գաղտնաթափանց աչքերովը կարդայ. «Մտէ՛ք նեղ դուռէն» յորդորը:  
Գիտակցութեան ներքին առանձնարանիդ մէջ խորհրդածէ՛ «Անձուկ  
է այն դուռը և նեղ է ճանապարհ» յաւերժական խօսքերը Յիսուսին:  
Վերոյիշեալ աստուածային պատգամները կու գան յայտնելու  
հաճոյապաշտ մարդուն, թէ կեանքի մէջ զգայացունց հաճոյքներէն  
զատ, իսկական և խորհրդագրաց վերացում մը եւս կայ, յայտնութիւն  
մը, տեսիլք մը, ու հոգեկան յափշտակութիւն մը, որ դէպի  
աստուածանմանութիւն կը տանի: Այս ճանապարհին միակ բանալին  
աստուածային **Սէրն** է: Սիրե՛լ այն, ինչ որ Աստուած կը սիրէ:  
Աստուած աշխարհը կը սիրէ՝ անոր ամբողջութիւնը:

Ենթական երբ մտնէ այն նեղ դուռէն, պարտաւոր կ'ըլլայ իր  
ներքնագոյն «ես»ը պզտիկցնել: Այդ խրոխտ «ես»ին կամփը՝ աստ-  
ուածային կամփին ենթարկած կ'ըլլայ:

Ճակատագրին խորհրդաւոր բանալին փնտոող ենթական, երբ  
հոգւոյն ներքնասրահը մտնէ և դուռը գոցէ, պէտք է չ'ունի  
խորհրդաւոր լռութենէն սոսկալու, որովհետեւ այդ հոգեկան  
ներհայեցողութեան պահուն Աստուած է որ իրեն հետ ժամադրուած  
է: Իր ենթագիտակցութեան մէջ, ուր իր ինքնութիւնը և անձնա-  
ւորութիւնը կը բնակի, աստուածային կայծն է որ զինք կը  
զանազանէ անբան անասուններէն: Այդ աննիւթական ու հոգեղէն

բնոյթն է ենթակային, որ խորհուրդով տեսլահար կը ճանչնայ իր Ստեղծիչը: Իր Արարչին ճանաչումով ու Անոր առինճնող սիրովը արփեցած՝ հողաբոյր մարդը կը դառնայ աստուածաբոյր, անձնասէրը՝ մարդասէր ու քայլամուտը դեգերածը՝ աստուածաճանաչ:

Մենք իմացած ենք "մօր մը կանչը",

"Հայրենիքի" մը կանչը և

"կռունկի" մը կանչը:

Ներկայ կանչը՝ կանչն է

"Ձայն բառբարոյ Անապատին"

**Կանչը Աստուծոյ, Եւ կանչը Բու "Երկնաւոր Հօր":**

Կ'ուզէ՞ս ժամադրութիւն մը հայցել Աստուծմէ և Բու ներփնագոյն «ես»իդ հետ: Մտի՛ր սենեակդ, փակէ՛ դուռդ և աղօթէ Հօրդ որ ծածուկը կը տեսնէ:

ԱՂՕԹԷ՛...:

Յունուար 24, 1988

Թորոնթօ

## ԵՐԲ Կ'ԱՂՕԹԵՄ...

Երբ կ'աղօթեմ,

Ծովեր կ'ուռին, կ'ալեկոծին կուրծքիս տակ,

Երբ կ'աղօթեմ,

Սիրտըս կարծես կը հրաբխէ ոռումբի պէս,

Երբ կ'աղօթեմ,

Անդնդախոր լռութիւններ կը պայթին,

Երբ կ'աղօթեմ,

Իմ հոգիէս փոթորիկներ կը յառնեն,

Երբ կ'աղօթեմ,

Երկնփի մէջ պատուհաններ կը բացուին

Եւ կը տեսնեմ

Ինչ որ հաւատքը կը տեսնէ միմիայն

Իր հոգեղէն

Աչքերով -- Ձա՛յն, որուն ականջն է մի՛շտ բաց,

Երբ կ'աղօթեմ...

-- ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Յ. Տ. 2001

# Մ Ա Ն Ր Ա Շ Խ Ա Ր Հ

Գիտակից մարդ էակը կ'ապրի երեք աշխարհներու տարածքին մէջ: Առաջին՝ տիեզերքի անհունութեան *անսպառ միջոցը*, երկրորդ՝ իր շօշափելի և *տեսանելի աշխարհի միջավայրը* ու երրորդ՝ իր *ներաշխարհը* ուր կ'ալեկոծին իրար հրմշտկող զգացումներ, յուզումներ և ապրումներ:

Այս երեք աշխարհները կը կաղապարեն ու կը կերտեն մարդ արարածը իրենց մագնիսական զօրութիւններով և փոխազդեցութիւններով: Մարդ, որքան ալ ենթարկուի սոյն երեք աշխարհներու ազդեցութեան, իր կարողութիւնը և սահմանը կը հասնի միայն իր շուրջի և ներսի աշխարհներուն: Մարդ, կառավարելու համար իր տեսանելի և շօշափելի աշխարհը, կարիքը ունի իր ներաշխարհի թափուն ուժերուն ու անոնց ներատեսական մասնակցութեան:

Ինչպէս հրաբուխներ, փոթորկահովեր, և երկրաշարժութիւններ կը պատահին երկրագունտի վրայ, նոյնքան և արելի սարսափազդու հոգեկան ու մտային դէպքեր և իրադարձութիւններ տեղի կ'ունենան մարդկային ներաշխարհին մէջ: Մարդկային խորհուրդի ու մտածումի կալուածը, ինքնին մանրաշխարհ մըն է անհուն և անեզր: Տիեզերք մըն է ան ինքն իր մէջ որ անսահման է ու անվերջ: Մարդուն համար, աշխարհ կը սկսի ինքն իրմով, ու իր մէջ կ'ամբարէ տեսանելի տիեզերքն ու մարդկային մտածումի և խորհուրդի անվախճան հորիզոններ:

Այսպիսի հզօր ուժանակային զօրութեան տէրն է հողաշէն մարդ էակը, որովհետեւ հպումն ունեցած է հանճարեղ, սիրո՛յ Արարչին: Գերմարդկայնին այս հպումը շատ գեղեցիկ կերպով նկարագրած է Միֆայէլ Անճէլո Վատիկանի Սիսթին Մատուռի առաստաղին վրայ, ուր աստուածային հպումէն, Ադամի մարմինը հաճելի սարսուռ մը կ'ունենայ և **կը դառնայ ինքնագիտակից:**

Մարդ արարածին ընծայուած սոյն գերբնական յատկութիւնները ու անոր շնորհուած գեղարուեստական ու ծարտարապետական զգացումները, մարդկութիւնը փոխակերպեցին անասնական և անբան կեանքէն դէպի աստուածային որդեգրութեան: Մարդ՝ իր բոլոր զօրութեամբ և տաղանդներով, իր հոգեկան հրաբխային պոռթկումներով, միշտ շփոթ կացութեան մը մէջ կը գտնէ ինքզինք, թէ որո՞ւ կամփին պէտք է ձգտի ու որո՞ւ սպաս դնէ իր անկերպարան սակայն ոսկետաղանդ ու գերբնական զօրութիւնն ու տրամադրութիւնը:

Տեսանելի և բնական աշխարհի շնչաւոր արարածներուն մէջ միայն մարդ-արարածն է, որ ունի այս բարձր ու հանճարեղ

տաղանդը: Այս խոր ինֆնագիտակցութեան պատճառով է, որ մարդ իր նմաններուն մէջէն կրցած է ծնունդ տալ սուրբերու, մարգարէներու և առաքեալներու, որոնք ցոյց տուին գերբնական հաւատարմութիւն և անձնուրացութիւն առ Հայր Աստուած՝ իրենց Արարչին:

Մարդկային հնարագիտութեան և ծարտարութեան բոլոր երեւելի ստեղծագործութիւնները, ըլլան անոնք արուեստի, գրականութեան և երաժշտութեան տարածութեան մէջ, բխած ու ծնունդ առած են մարդու ներաշխարհէն: Համակարգելով տրուած պատճառաբանութիւնները, կ'ուզեմ ներկայացնել Սաղմոսներու երգիչ Դաւիթ թագաւորը, որ կը գեղգեղէ ֆնարական սաղմոս մը, ըսելով.

*«Ով Աստուած, իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ,  
Եւ իմ ներսիդիս ուղիղ հոգի նորոգէ,  
Ու քու Սուրբ Հոգիդ ինձմէ մի հաներ»:*

*«Սիրտ սուրբ հաստեա յիս, Աստուած,  
Եւ հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում,  
Եւ զՀոգի սուրբ քո մի հաներ յինէն»--Սաղմ. 51.10-13*

«Մէջս», «ներսիդիս» և «մի հաներ» բառերը մեզ կը ստիպեն հաւատալու, որ մարդկային ներաշխարհը անգոյ դատարկութիւն մը չէ՝ նման անբան անասնական կենդանիներու, այլ անսպառ, անսահման և անընդգրկելի տիեզերք մըն է, ուր մարդ կը հաղորդուի ու կը յարաբերի իր Արարչին հետ: Մարդկային ներաշխարհը տիեզերք մըն է, որ համօրէն կը խորհրդանշէ Հոգեւորը իր լուսապայծառ արեւով ու իրիկուան աստեղազարդ երկնակամարով: Ուստի Նազովրեցի Մարգարէին ակնարկութիւններուն մէջ իսկ կրնանք տեսնել մանրաշխարհ-մարդու հզօր կարելիութիւնները, երբ Որդին Մարդոյ ըսաւ բժշկուող կոյրերուն և շատ մը ուրիշներուն.

**«Ըո՛ւ հաւատդ քեզ բժշկեց»--Մատթ. Թ.22:**

Ոչ թէ արտաքին զօրութիւն մը, այլ ներքին, այն ներաշխարհի՛ն մէջ պահուած հաւատքը (աստուածային թափուն պարգեւը) գործեց սոյն արդիւնաբերութիւնը, որ մարդիկ "հրաշք" կը կոչեն: Յիսուս Քրիստոսի Ֆիզիքական *ներկայութիւնը* ազդակ մը եղաւ, որ հիւանդը *գիտակցի՛* իր մէջի այդ ուժանակային զօրութեան: Հաւատքի այս երկնագեղ ու վեհիմաստ զօրութեան, մեծութեան և սփանչելիութեան ականատես կ'ըլլանք, մանաւանդ երբ դիտենք

ոչ-հրեայ ու ոչ-Քրիստոնեայ, այլ հեթանոս Հռոմէացի հարիւրապետի մը հաւատքը: Յիսուս երբ լսեց զարմացաւ և ըսաւ իր հետեւորդներուն.

**«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ  
այսպիսի հաւատք չգտայ երբեք»**--Մատթ. Ը.10:

Ի՞նչ էր արդեօք այս աննախընթաց հաւատքին անբաղդատելիութիւնը ուրիշ անձերու հաւատքէն: Այս բուժիչ հաւատքը, որ նոյնիսկ, տեսակ մը, զարմացուց նաեւ Յիսուս, կը զատորոշուէր սաբնոյթով, որ բժշկեց ոչ թէ ենթական (հռոմայեցին), այլ՝ չհաւատացող երկրորդ անձ մը (անոր ծառան): Սոյն դէպքը մեզ կը մղէ հաւատալու, թէ մարդկային հաւատքի զօրութիւնը կը ներազդէ ոչ միայն *հաւատացողի՛ն վրայ*, այլ՝ հաւատքը իր մէջ ունի նաեւ *փոխանցումի՛ կարելիութիւնը*: Հաւատացեալի մը աղօթքը ունի ներգործօ՛ն ազդեցութիւն մը *ուրի՛շ* անձի մը վրայ եւս: Յիսուս Քրիստոս՝ իր սիրած աշակերտին Պետրոսի կ'ըսէ.

**«Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա Սատանան ուզեց ցորենի  
նման մաղել ձեզ: Բայց ես աղօթեցի քեզի հա-  
մար, որպէսզի չպակսի քու հաւատքդ, և դուն,  
երբ ալ ըլլայ, վերադառնալով, հաստատես քու  
եղբայրներդ»**--Ղուկ. ԻԲ.32:

Այսպիսի փոխանցիկ ու վարակիչ հաւատքի միջոցով է, որ Յիսուս, Աստուծոյ Որդին յարութիւն տուաւ Հայրոս ժողովրդապետին 12 տարեկան աղջկան, ըսելով անոր. **«Տալիդա Ելիր»**: Ոչ թէ մեռեալին հաւատքն էր զոր ներգործիչ ազդեցութիւն գործեց սոյն հրաշքին, այլ հօ՛րը հաւատքը փոխանցուեցաւ հայրական սիրոյ ներաշխարհէն դէպի իր անկենդան աղջկան:

Այս առթիւ կ'արժէ յարակից ուժի մը փոխանցման նիւթը եւս քննարկել առանց հեռանալու մեր նիւթէն: Նիւթ մը որ հաւատքի փոխանցումին զօրութիւնն ու անոր ներգործական արդիւնաբերութիւնը կը բացատրէ ամուսնական կեանքի մէջ: Պօղոս առաքեալ իր ներհուն և երկնային ներշնչումով կ'ըսէ.

«Եթէ եղբայր մը անհաւատ կին մը ունենայ, և հաճելի ըլլայ իրեն ապրիլ անոր հետ՝ թող չձգէ զայն,։ Եւ եթէ կին մը ունենայ անհաւատ ամուսին մը որ ուզէ ապրիլ իրեն հետ՝ թող չձգէ իր ամուսինը. որովհետեւ անհաւատ ամուսինը իր կնոջմով սրբուած կը համարուի, սրբուած կը համարուի նաեւ անհաւատ կինը իր ամուսինով.

Այլապես ձեր որդիները պիղծ պիտի ըլլային.

մինչդեռ հիմա սրբուած են»--Ա. Կորնթ. Է.12-14:

Արդեօք վերոյիշեալ համարները բաւարար չե՞ն բոլոր անոնց, որոնք անկեղծօրէն ու աննախապաշարօրէն կը փափաքին հաւատալ մարդկային զանազան դասակարգի ապրումներու պահանջին: Պօղոս առաքեալ ո՛չ թէ զոհը դարձած է իր ազատախոհութեան, այլ կը ջանայ բացատրել Հայր Աստուծոյ անչափելի ողորմութիւնը և անսպառ սէրը հանդէպ մարդկութեան: Ան կը համարձակի ծնողքի մը միայն մէ՛կ անդամին հաւատով սուրբ (կամ սրբացած) կոչել ծննդագործուած երախան: Մինչդեռ կարգ մը, իրենք զիրենք բարեպաշտ ու հաւատացեալ կարծողներ չեն թոյլատրեր մկրտել իրենց զաւակները, սպասելով որ անոնք չափահաս ըլլան ու ապաշխարելէ՛ ու հաւատալէ յետոյ մկրտուին ... :

Արդեօք այս կարծեցեալ հաւատացեալները իրենց մայրենի լեզուէ՞ն ալ կը զրկեն իրենց հարազատները, որ երբ անոնք չափահաս ըլլան ընտրեն իրենց խօսելու լեզուն...: Ինչո՞ւ համար զոյգ հաւատացեալ ծնողներէ ծնած երախայ մը զրկուի աւագանի մկրտութենէ և միւռոնի դրոշմէն: Այսպէս մտածելը նախապաշարո՞ւմ է, թէ խոր հաւատ:

Այսպիսի կասկած ու թերահաւատութիւն տարածող և սորվեցնողներ թող զգոյշ ըլլան գայթակղեցնելէ շփոթած և անգէտ հաւատակիցները որոնք սիրելի են իրենց Փրկչին Յիսուսի:

Մարդկային մանրաշխարհը, աչքով անտեսանելի, երեւոյթներու աշխարհ մըն է, աթոմներու և զօրութիւններու տիեզերք մը: Կարծէ՛ հետազօտել մարդկային այս ներաշխարհը իր սփանջելիքներուն և կարելիութիւններուն համար: Արդեօք ի՞նչ զօրութիւններու գանձարան մըն է այս մտածումի կամ խորհրդածութիւն կոչուած ներանձնական ապրումներու հոգեկան ատեանը ուր աստուածայինն ու մարդկայինը իրար կը միանան:

Անճառելի Իմաստութիւն Յիսուս Իր աշակերտներու դաստիարակութեան ընթացքին, կ'ըսէ Պետրոսին.

**«Ինչ որ անգամ մը կապես երկրի վրայ՝ կապուած պիտի ըլլայ երկինքի մէջ: Եւ ինչ որ արձակես երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ»**

--Մատթ. Ժ2.19:

Ի՞նչ էր արդեօք այս մտքի, մտածումի և վճռի թափուն զօրութիւնը, որ մարդկային էակը իր մէջ կը կրէ: Յիսուս Քրիստոսի քարոզչական ամբիոնը սուրբ է և ուսուցումը դաստիարակչական: Ան վարժեցնելէ յետոյ Իր աշակերտները դարձաւ անոնց և ըսաւ.

**«Աստուծոյ արբայութիւնը ահա ներսը, ձեր մէջն է»**

Վերոյիշեալ խօսքերով, Յիսուս ըսել կ'ուզէ, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը մեր էութեան հետ հոգեխառնուած է: Որովհետեւ Հոգեկան Լոյսը կ'առաջնորդէ մարդը ո՛չ միայն գիտնալու և ծանօնալու իր փնտռածը, այլ ծանօցուած Մէկը իրացնելու, Անոր պէս ապրելու և Անոր նմանելու: Յիսուս կը բացատրէ, թէ մեր մտածումները, խորհրդածութիւնները և հոգեկան աշխարհը այս մեր շօշափելին ու միայն աչքով տեսանելին չէ՛, այլ կա՛յ մտածումի, հաւատքի ու հոգիի՛ն աչքով տեսանելին, ուր Աստուած կը գործէ և կը յայտնէ Իր ծրագիրները մարգարէներուն ու Իր ծառաներուն, որպէսզի մարդ արարած դառնայ Իրեն գործակիցը, աշխատակիցը և ի վերջոյ որդեգիրը:

Մարդկային ներաշխարհին մուտքը կամ նախադուռը խորհրդագրածութեամբ, աղօթքով ու աստուածային յայտնութեամբ կ'ըլլայ: Հոգեկան յարատեւ վարժութիւն, մտային կեդրոնացում և հաւատքի վստահութիւն կը կարօտի: Երբ սերտենք մեզ սիրող Յիսուս Քրիստոսի կեանքը և մարդոց հետ Անոր ունեցած յարաբերութիւնը: Երբ տեսնենք առաքեալներու նուիրումը, անոնց գոհողութիւնը և հաւատարմութիւնը հանդէպ իրենց Փրկչին ու Տիրոջ, հոն կը հանդիպին կարգ մը մատնացոյց նշմարներու, օրինակ.-

**«Յիսուս երբ ժողովուրդի բազմութիւնը արձակեց՝  
լեռը բարձրացաւ առանձին աղօթելու համար: Եւ  
երբ իրիկուն եղաւ՝ այնտեղ էր, միայնակ»**

--Մատթ. ԺԴ.23:

Յիսուս՝ հրաշագործ Մարգարէն բոլոր օրը փարօզելէ և հինգ հազար հոգին կերակրելէ յետոյ, փոխանակ պառկելու և հանգչելու, լեռ կը բարձրանայ աղօթելու համար: Աղօթելը՝ ձեռնարուեստ մը չէ՛, այլ հոգեզրոյց մըն է, մտասեւեռում մըն է և տրամախօսութիւն ու յարաբերութիւն մըն է երկրորդ Անձի մը հետ: Միածին Որդւոյն այս աղօթքը, խորհրդածութիւնը կամ տրամախօսութիւնը Հօր հետ, հինգ կամ տասը վայրկեանի շրջան մը չբոլորեց, այլ երկա՛ր ժամեր, որովհետեւ երբ դադրեցաւ աղօթելէ, արդէն առաւօտուան մօտ էր:

**«Այդ օրերուն Յիսուս լեռ բարձրացաւ աղօթելու  
և ամբողջ գիշերն անցուց աղօթելով Աստուծոյ:  
Եւ երբ լուսցաւ՝ կանչեց Իր աշակերտները և ըն-  
տրեց անոնցմէ տասներկուք, զոր Առաքեալներ  
անուանեց»--Ղուկ. 2.12:**

Յիսուս Քրիստոս կրկին Իր մտածումի և աղօթքի դռնէն կը մտնէ Իր ներաշխարհի հոգեկան ուրորտները և կը խորհրդակցի Իր Հօր հետ: Այս խորհրդածութիւնը կը տեսէ ամբողջ գիշեր մինչեւ որ օրը կը լուսնայ: Յիսուս ըլլալով հանդերձ Աստուածորդի՝ կարիքը ունի խորհրդածութեան, մտասելեռումի և աստուածային հաղորդութեան: Ինչո՞ւ: Որովհետեւ որոշում պիտի առնէր ընտրելու համար տասներկու Առաքեալները:

Յիսուս կը բացայայտէ թէ Աստուած ինչպէ՞ս կը ներէ մարդոց յանցանքները, Ան կ'ըսէ.

**«Երբ աղօթէ՛ք՝ ներեցէ՛ք եթէ մեկուն դէմ բան մը ունիք, որպէսզի ձեր Հայրն ալ, որ երկինքն է, ներէ ձեր յանցանքները»**--Մարկ. ԺԱ.25:

Ինչպէս վերել յիշուած էր, մարդկային մանրաշխարհի երեւոյթներու զօրութիւնները թէեւ անտեսանելի են, սակայն՝ անուրանալի ճշմարիտ իրականութիւններ են: Մարդկային հոգեկան կորիզին մէջ այնպիսի յարաբերութիւններ գոյ են խորհուրդներու և մտածումներու, որ երբ միանան աստուածային հեռասփռուած Մտփին հետ, մարդկային էութիւնը կամ իսկութիւնը կը պարտաւորուի իր ժխտական և հակադիր կեցուածքէն փոխակերպել դէպի դրական՝ երկրպագակա՛ն պաշտամունքի, որպէսզի կարենայ հաղորդուիլ Բարիին հետ ու ներշնչուիլ Գերբնականի սուրբ և կենսաւորիչ Մտածումներով:

Այսպիսի հոգեկան վարժութիւններու համար, իւրաքանչիւր հաւատացեալ կը կարօտի հսկումի և յարատեւ աղօթքի ժամեր անցնելու, որպէսզի դառնայ իր հաւատփին գիտակից ու Յիսուս Քրիստոսի ընկերակից: Աշխարհական ուսանող աշակերտէ ալ կը պահանջուի նոյնօրինակ կարգապահութիւն և նուիրում:

Յարուցեալ Քրիստոսի տասներկու հաւատարիմ առաքեալները երբ ձեռք առին Աւետարանի վկայութիւնը, որպէսզի շարունակեն իրենց մեծ Վարդապետին Բարոգութիւնն ու ուսուցումը, իրենք եւս գիտակից էին թէ որքա՛ն անհրաժեշտ է ներաշխարհի խորհրդածութիւնը ուր Աստուած ու մարդ կը միանան: Միասին կարդանք Գործք Առաքելոց Գրքին վեցերորդ գլուխ 2-5 համարները.

**«Հաճելի չէ մեզի՝ թողուլ Աստուծոյ խօսքը և սեղաններու ծառայութիւնը ընել»:** Այսինքն՝ ժողովներու նախագահել:  
**«Մենք պէտք է նուիրուինք աղօթքի և խօսքի սպասաւորութեան»:**

Այս վախկոտ աշակերտները, այս ֆնացող աշակերտները, որոնք չկրցան ժամ մը արթուն կենալ երբ իրենց Վարդապետը ճգնաժամ է ու տառապանք է կ'անցնէր և Անոր ֆրտինքը արիւնի կաթիլներու նման կ'իչնէր Գեթսեմանիի Ձիթենեաց պարտէզին մէջ, Քրիստոսի յաղթական Յարութենէն յետոյ բոլորովին կերպարանափոխուած կերելին: Իրենք զիրենք փոխանակ ձկնորսութեան կամ ֆնանալու նուիրելու, կ'ուզեն նուիրուիլ *աղօթքի և ֆարոզութեան*: Այսօր շատ է կղերական ու աշխարհական ֆարոզիչներու թիւը: Սակայն ո՞ր են *աղօթող* ֆարոզիչները:

Առաքեալները իրենց Յիսուս Վարդապետէն սորվեցան թէ որքա՛ն կարելոր է մարդկային միտքը հաղորդակցութեան մէջ դնել ու պահել յարաբերուելու համար Յաւիտենականին՝ մեծագոյն Մտֆին և մարդկութիւնը սիրող Հօր Աստուծոյն հետ:

Կ'ուզե՞ս ճանչնալ ինքզինքդ: Կ'ուզե՞ս գիտնալ ֆու մանրաշխարհիդ թաֆուն զօրութիւնները: Վարժեցո՛ւր ինքզինքդ աղօթքի, և յարաբերութեան մէջ մտիր ֆու Ստեղծիչ Աստուծոյդ հետ: Հաղորդուէ՛ աստուածային անսպառ սիրոյ զօրութեան և իմաստութեան: Ճանչցի՛ր ներկայ դէպքերու դրդապատճառները և գալիք դէպքերու ստուգութիւնը:

Ապրէ՛ գիտակցօրէն ու ո՛չ խարխաբելով, տարուած մարդկային խաբէութենէ ու սուտէ: Եղի՛ր ինքնավստահ ու ոչ ամբարտաւան: Վստահէ՛ այն Աստուծոյն, որ ֆեզ փոխակերպած է ու կ'ուզէ կատարելութեան հասցնել Իր արարածը՝ որ դո՛ւն ինքդ ես: Քեզ օժտած է Իր թաֆուն զօրութիւններով և կարողութիւններով: Ան կ'ուզէ որդեգրե՛լ ֆեզ և աստուածացնե՛լ ֆեզ: Ան կ'ուզէ դրոշմե՛լ ֆեզ Իր նկարագրով, որ կերպարանափոխէ ֆեզ հողեղէնէ՝ հոգեղէնի, որովհետեւ Ան ըսած է.

**«Եւ դուք կատարեա՛լ եղէք,  
ինչպէս ձեր Երկնաւոր Հայրը կատարեալ է»:**

Ահա ա՛յս ըլլալու է մեր վերելքն ու խոյանքը այս աշխարհին մէջ:

**Ապրիլ 11, 1987, Թորոնթօ**

## “ՓԱԿԷ՛ ԴՈՒՌԴ”

**Նւ ծածո՛ւկ աղօթէ՛:** Կը յիշէ՞ք այն սիրավառ պահերը և հաճելի վայրկեանները երբ ձեր սիրականը այցելութեան կու գար գաղտնօրէն վայելելու իրարու ներկայութիւնը: Կը մտաբերէ՞ք ձեր չարածըճի եղբայրն ու բոյրը որ ձեզ կը նեղէին բանալով սենեակին դուռը որ դուրս կը ջանայիք փակ պահել: Ամէն անգամ որ փակէիք դուռը, անոնք պատրուակելով ներս կը մտնէին որ ձեզ սրդողեցնեն: Սիրային վայելքը՝ իր պատանեկան անմեղ բիւրեղացման ընթացքին, տեղի կ’ունենայ «փակ դռան» մը ետին:

Ինչո՞ւ հոգեզմայլ գերացնծութիւնը, մարմնակենցաղ մարդարարածը կը ջանայ վայելել *փա՛կ* դռան մը ետին:

Ոգեղինացած իմացական սփանչացումը՝ նիւթեղէնի և մարմնեղէնի ինֆնարտադրութիւն մը չէ, այլ գերբնական և անկապտելի զօրութեան ներասոյգ հեղեղումի պարգեւ մը: Շնորհ մըն է այդ որ կու գայ մարդարարածին՝ Արարիչ Աստուծմէ:

Սոյն խորհրդազգաց վերացումն ու հոգեմտաւոր յափշտակութիւնը՝ մարմնական և սեռային հրապոյր մը չէ միայն, այլ՝ երկնային հոգեհմայ զօրութիւնն է: Այդ թովիչ զօրութիւնը իր մագնիսական հմայքով իրեն փաշած է նախադարեան որոնող մտերն ու բազմադարեան մոգերու, իմաստասէրներու և մարգարէներու ֆերթողական բանահիւսութիւնները:

Աղօթքն ու աղօթելը՝ Զրիստոնէական իրագործում մը չէ միայն, այլ պատմագիտօրէն մարդարարած աղօթո՛ղ էակ մը ծանչցուած է: Մարդ, աղօթքով գերբնականին հետ հաղորդակցակցած և վկայած է պատկերագրութեամբ ժայռերու վրայ ու նաեւ ֆարանձաներու խորքը:

Հրապարակային աղօթքները՝ թէեւ տեղի կ’ունենային, սակայն աղօթող անկեղծ հոգիներ, իրենց աղօթքն ու աղօթելու պահերը գաղտնի կը պահէին: Աղօթքը անոնց համար կրօնական ծիսակատարութիւն մը ըլլալէ աւելի, անձնական միստիկ պրպտումներու ոլորտ մը և Գերբնականին հետ հաղորդուելու խիզախ փորձառութիւն մըն էր:

Խորհրդապաշտ կրօններու (*mystery religions*) որեւէ աղօթքներն ու անոնց աղօթելու ծէսերը կամ կերպերը մեզի անծանօթ են, որովհետեւ գաղտնի՝ տեղի կ’ունենային անոնք, և հեթանոս ֆահանսներէն զատ աշխարհականներ բոլորովին անտեղեակ կը պահուէին:

Յիսուս ձաղկեց Իր ժամանակակից Հրեայ կրօնաւորներու հրապարակաւ աղօթելը: Որովհետեւ Հրեայ կրօնաւորները, Աստուծոյ Տաճարը տօնավաճառի դարձուցած էին, ու խորհրդագգաց աստուածային յարաբերութիւնն ու բարեպաշտութիւնը՝ շահավաճառութեան: Սրբութիւնն ու հոգիի անբծութիւնը երբ ապականի ու եղծանի, մարդկային էութիւնը ոչ թէ միայն կ'ալլասերի այլ կը դիւահարի: Պետութեան մը քաղաքացիները կրնան համաձայն չ'ըլլալ իրենց երկրի վարչաձեւին, իսկ երբ ոմանք այդ վարչաձեւը խեղաթիւրեն և եղծեն, կը կոչուին դաւաճան և թշնամի: Այս պատճառաւ Յիսուս պախարակեց և դատապարտեց կեղծաւոր դպիրներն ու փարիսեցիները—կրօնաւորները:

**Ինչո՞ւ «փակել դուռ»ը:**

Օթոյի մը դուռը կը փակենք երբ արժէքաւոր առարկայ մը ըլլայ մէջը: Տան դուռը կը գոցենք երբ դրամական մեծ գումարներ կը հաշուենք: Խօսեցեալներ՝ դուռը վրայ կ'ընեն երբ իրարու հետ հեռաձայնով կը յարաբերին:

Արժէք և յարգ ունեցող որեւէ ինչ չի հրապարակուիր, Միայն այդ արժէքներուն *տպաւորութիւնն* ու ազդեցութիւնը կը ցոլանայ: Մեծահարուստ ունեւորներ, իրենց ինչ ունենալը չեն հրապարակեր, սակայն հանրութիւնը կը նշմարէ անոնց ունեւորութիւնը իրենց բնակած տունէն և քաղաքը ինքնաշարժէն որոնք ցոլացումներն են անոնց հարստութեանը:

Նոյնն է նաեւ յարաբերութիւնը Գերբնականին ու Յաւիտենականին հետ: Սուրբերուն անձնական աղօթավայրը և աղօթածամը անյայտ էր, սակայն անոնց հոգեւոր աշակերտ եղբայրները, կրնային նշմարել թէ ե՞րբ աղօթած են իրենց մեծաւորները անոնց պերճանքէն և պատկառանքէն:

Աստուածային այսպիսի շնորհի արտացոլացման պատճառաւ 12րդ Դարու երգիչ Հայ Հայրապետը կոչուեցաւ *շնորհալի* որպէս ապացոյց իր երկնային հոգեկան արտացոլման:

Նոյնպէս Յիսուս՝ Իր աղօթքն ու Հօրը հետ ունենալիք յարաբերութիւնը կը վայելէր, ժողովուրդները և աշակերտները արձակելէ վերջ: Ան առանձինն կը մագլցէր լեռան վրայ ու ժամերով կ'աղօթէր Հօր հետ: Յիսուս՝ Իր վերջին աղօթքը կատարեց Գեդսեմանիի պարտէզին մէջ, բաժնուելէ յետոյ Իր ութը աշակերտներէն: Ան միայն երեք հոգի, Իր ամենամտերիմները, առաւ Իր հետ. ու զանոնք ալ թողուց և Ինք *առանձինն* աղօթեց Հօրը: Յիսուսի հրապարակաւ աղօթելը երբեք չէ արձանագրուած: Միայն խաչին վրայ կատարուած աղօթքը գիտենք, այդ ալ շատ հաւանական է որ լսուեցաւ Իր մօր Ս. Մարիամի և Մարիամ Մագդաղենացիի կողմէն:

Ուստի *փակե՛նք դուռը*, լռեցնելու համար աշխարհի ժխորը, վտարելու համար սատանան և հեռացնելու մեր մտքէն երկրաբար խորհուրդներն ու փորձիչ թելադրութիւնները: Թռիչք տանք մեր հոգիներուն դէպի անապական հորիզոն ուր պիտի ըլլայ մեր ժամադրավայրը Յաւիտենականին ու Պանծալիին հետ: Անաղմուկ և մենակեաց ժամադրավայրին մէջ սպասենք Տիրոջը անվրէպ հանդիպումին:

Յաւիտենականին արեւալոյսը՝ գիտակցութեան ներքին առանձնարանին հորիզոնն է: Հոգւոյն հորիզոնէ՛ն միայն կ'իմացուի Աստուծոյ ձայնը. այս ձայնը՝ **լռութեա՛ն** ձանն է որ հոգիով կ'իմացուի: **Լռութեան** ձայնը նման է հօր մը լուռ ձայնին իր գրկած նորածինը կը սեղմէ իր կուրծքին, և հոգեկան յափշտակութեան մէջ միայն կ'զգացուի՛ն, կ'ապրուի՛ն, և կը ցնծերգեն իրար սիրող մաքուր հոգիները:

**Դեկտեմբեր 31, 1989, Թորոնթօ**

## ԱՂԱՉԱՆՔ

Ինչպէս ծառերն համօրէն կը նորոգես դուն գարնան՝  
Հագցնելով նոր ծիւեր, նոր տերեւներ, նոր մայիս,  
Ո՛վ Տէր, նոյնպէս վառ եռանդ, թարմ աւիշ տուր հաւատփիս,  
Որ օրերուն դէմ ձիւնող ընդ միշտ դալար մնայ ան:

Խարիսխի պէս խորացո՛ւր իր արմատներն հոգւոյս մէջ,  
Եւ ճիւղերն իր դէպի քեզ թո՛ղ բարձրանան երկնաձիգ,  
Որ աշխարհիկ փորձութեան ո՛չ մէկ խորշակ կամ մրրիկ  
Սասանէ ծառն իր երբեք ու տապալէ գահավէժ:

Կեանքին դէմ նենք զօրացո՛ւր, Տէ՛ր, հաւատփըս դեռատի,  
Սպառազէն հաւատփին չափ բանակի մը անբեկ,  
Որ հոգիիս թշնամի ո՛չ մէկ մութ ոյժ, ո՛չ մէկ մեղք  
Սոնփայ, տոկայ անոր դէմ, այլ նահանջէ՛, սարսափի՛,

Ի տես քեզմո՛վ վաշտացած և բերդացած հաւատփիս:

--ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

## “ՄԻՆՉԵՒ ՀԻՄԱ ԻՄ ԱՆՈՒՆՈՎԱ ՈՉԻՆՉ ԽՆԴՐԵՑԻՔ”

Աստուածաշնչական իմացումով, անուն մը ցուցանիչ մը (Iable) մը չէ, այլ ենթակային ներքին էութիւնը, անոր առանձնա-  
յատկութիւնը, իսկութիւնը, բնատրութիւնը և արժանատրութիւնը՝  
յարգը ցոյց կու տայ: Անձի մը անունը, կը յայտնէ անոր  
նկարագիրը:

Աստուած արժանի գտաւ, որ Ադամ բոլոր անասուններուն ու  
երկինքի թռչուններուն և դաշտի բոլոր գազաններուն անուններ  
դնէ--Մնն. Բ.20: Ուստի գիտնալ Աստուծոյ Անունը, ծանչնալ է  
զԱստուած այնպէս ինչպէս Յիսուս յայտնեց զԱյն: Մեր Տէրը Յիսուս  
Քրիստոս Իր սրբարար աղօթքին մէջ կ'ըսէ. «*Քու անունդ յայտնեցի  
այն մարդոց, զոր տուիր ինձի աշխարհէն. Բուկդ էին ու ինձի տուիր  
զանոնք, անոնք քու խօսքդ պահեցին... Ես քու անունդ ծանչցուցի  
անոնց ու պիտի ծանչցնեմ, որպէսզի այն սէրը, որով դուն զիս  
սիրեցիր, ըլլայ անոնց մէջ, և ես՝ անոնց մէջ*»--Յով. ԺԷ.6, 26:

Անձի մը անունը կը ներկայացնէ ու կը յայտնէ ենթակային  
իսկութիւնը և անձնատրութիւնը: Եսաւ իր հօր Յակոբի կը գան-  
գատի եղբօրը համար ու սապէս կ'արտայայտուի. «Անոր անունը  
Յակոբ կոչուելուն համա՛ր է որ այս երկու անգամ զիս խաբեց. իմ  
անդրանկութեան իրաւունքս առաւ, և ահա հիմա օրհնութիւնս ալ  
առաւ»--Մնն. ԻԷ.36:

Վերոյիշեալ համարին մէջ, Յիսուս ոչ միայն կ'ըսէ. «Ես քու  
անունդ ծանչցուցի անոնց», այլ նաեւ կ'ըսէ. «**Ու պիտի  
ծանչցնեմ**»: Չէ՞ որ Յիսուս անգամ մը ծանչցուցած էր Աստուծոյ  
անունը Իր աշակերտներուն, ի՞նչ է ուրեմն «*ու պիտի ծանչցնեմ*»-ը:  
Յիսուս Քրիստոսի վերջին ասութիւնը կը ստիպէ զիս խորհիլ, թէ  
Յիսուս պարզ մակդիր անունի մը մասին չխօսիր, այլ խորհուրդի՛  
մը մասին: Ուստի ի՞նչ կը նշանակէ աղօթել Ի՛ր անունով:

**Անուն և անձնատրութիւն:** Նոր Կտակարանի մէջ անձի  
մը անունը ա՛յդ անձին ու անոր անձնատրութեան միաձուլուիլն է:  
Այս ակնառու դէպք դրուաքը յիշուած ու գրուած է Մատթ. Ա.20  
համարներու մէջ, կարդանք.

Եւ մինչ Յովսէփ այսպէս կը մտածէր, ահա Տիրոջ հրեշտակը  
տեսիլքի մէջ երեւցաւ անոր և ըսաւ. «*Յովսէփ, Դաւիթի՛ որդի, մի՛  
վախնար քու կինդ՝ Մարիամը քովդ առնելէ, որովհետեւ ան՝ որուն  
մայրը եղած է նա, Սուրբ Հոգիէն է: Պիտի ծնի որդի մը, և անոր  
անունը Յիսուս պիտի դնես, որովհետեւ ան պիտի փրկէ իր*

*ժողովուրդը՝ իրենց մեղքերէն»:*

Անունի մը մէջ գոյութիւն ունեցող խորհրդաւոր զօրութիւնը, թէեւ ներկայ գիտութիւնը չ'ընդունիր, սակայն իրապէս գոյ է ու հաւատալի անցեալ կրօնաւորներուն համար: Երուսաղէմի Հրեայ Բահանայապետը և Կայիափա կը հարցնեն Պետրոսի և Յովհաննէսի ըսելով. «Ի՞նչ **զօրութեամբ** կամ որո՞ւ **անունով** ըրիք դուք այդ բանը»: ...Պետրոս Սուրբ հոգիով լեցուած, ըսաւ անոնց. «Ո՛վ իշխանաւորներ ժողովուրդի և երէցներ Իսրայէլի, ...Թող յայտնի ըլլայ ձեզի բոլորիդ և Իսրայէլի ամբողջ ժողովուրդին, թէ նազովրեցի **Յիսուս Քրիստոսի՝ անունով** ըրինք զոր դուք խաչեցիք, և որուն Աստուած յարութիւն տուաւ մեռելներէն: ...Եւ չկայ փրկութիւն ուրիշ մէկու մը միջոցով, որովհետեւ երկնքի տակ չկայ մարդոց տրուած ուրիշ անուն, որով կարելի ըլլայ մեր փրկութիւնը»--Գործք Դ.5-12:

Գողգոթան միայն աշխարհագրական անուն մը չէ բարձունքի մը, այլ Քրիստոսի արեամբ ու վկայութեամբ նուիրագործուած դէպք ու ցոլացումը Աստուծոյ Սիրոյն: Մարդեղեալ Բան Աստուծոյին հանդիպող անձ մը կը ստանայ նոր բնութիւն և նոր անուն: Սիմոն Յովնանի որդին, կ'ըլլայ. "Պետրոս" "Նոր ծնունդ" մը:

Հեթանոսական շրջանին, աստուծոյ մը *անունը* կանչել ոչ միայն աստուածութեան նկարագիրը ի մտի ունենալ էր, այլ անոր **հաղորդ** ըլլալ կը նշանակէր: Յիսուս Քրիստոսի **անունով** աղօթել առ Աստուած, կը նշանակէ՝ Անոր **Հոգիո՛վ** աղօթել, որպէսզի աղերսարկուն ալ աւելի մեծ զօրութիւն ստանայ: Սոյն իմաստով Յիսուս կ'ըսէ աշակերտներուն. «*Ինչ որ ալ Իմ Անունովս խնդրէք Իմ Հօրմէս՝ տայ ձեզի*»--Յով. ԺԵ.16:

Ուստի ինչպէ՞ս կրնանք **Յիսուսի Հոգիո՛վը** աղօթել:

Քրիստոս Իր ամենախոնարհ ծագումով, Իր օրինակելի բարութեամբ, Իր օրինակելի համեստութեամբ, Իր օրինակելի զոհաբերութեամբ, և մանաւանդ՝ Իր օրինակելի աղփատութեամբ ծանցցուած է Իր Եկեղեցիին մէջ: Ուստի եթէ աղօթող մը չի կրնար Յիսուսի օրինակելի համեստութեամբ ապրիլ ու նմանի՛լ իր Փրկչին, Անոր անունով աղօթել ու խնդրել կրնայ ապարդիւն ըլլալ: Որովհետեւ Քրիստոնէութիւնը կառուցուած է Յիսուս Քրիստոսի զոհաբերութեան խորհուրդին վրայ:

Այսպէս կը պարտաւորուիմ խորհիլ, որովհետեւ Սաղմոսերգուն կ'ըսէ. Աստուծոյ. «Վասնզի զոհի չես հաճիր որ զանիկա մատուցանէի. Դուն ողջակէզի ալ չես հաւնիր: Աստուծոյ զոհը կոտրած հոգին է. կոտրած ու խոնարհ սիրտը, ով Աստուած, դուն չես անարգեր»--Սաղմ. 51.16-17: Մարգարէն ինչո՞ւ զոհագործութիւնը

անարժեք կը համարէ: Որովհետեւ ամէն զոհագործութիւն անձի մը ի՛ր անելորդէն կը մատուցուի: Օրինակ. անձ մը մեծ գումար մը կը նուիրէ եկեղեցիին, կամ մատաղ կ'ընէ ու հարիւրաւորներ կը կերակրէ, այդ բոլորը հարուստին անելորդէն կը նուիրուին: Նուիրողը կրնայ շարունակել իր ամէնօրեայ կեանքը որպէս յափշտակիչ, անգութ, և անհաւատ: այդ բոլոր զոհագործութիւնները կատարած կ'ըլլայ իր փառփին համար... : Հետեւաբար.-

Մօտ հազար տարի յետոյ, Դաւիթ Թագաւորէն, Պօղոս առաքեալ, իր անտարանչութեան կարիքները կը խնդրէ Հայր Աստուծմէ Յիսուսի անունով, որովհետեւ Պօղոս կ'ապրի նման իր Յիսուս Փրկչին: Ան, Յիսուսի նման ապրելէ՛ն յետոյ կը փառաբանէ հաւատացեալներն ալ ապրելու Յիսուսի նման, որպէսզի արժանանան Յիսուսի անունով աղօթել: Պօղոս կ'ըսէ Կորնթացիներուն. «*Ինչո՞ւ դո՛ւք զրկանք չէք կրեր և անյի ես՝ դո՛ւք նեղութիւն չէք փաշտեր*» --Ա. Կորնթ. 2.7: Այս բոլորէն վերջ Պօղոս առաքեալ կ'աղաչէ հաւատացեալներուն ու կ'ըսէ.

**«Կ'աղաչեմ որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք որպէս կենդանի զոհ մը՝ իրեն վերապահուած, որովհետեւ ատիկա՛ է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտամունքը»**--Հռոմ. ԺԲ.1:

Պօղոս կ'աղաչէ, որ մենք մե՛ր անձերը զոհաբերենք ու ո՛չ մեր անելցուիք՝ դրամական նուիրատուութիւն կամ բարեգործութիւն: Մարդ բազմաթիւ բաներ կրնայ ընծայել Աստուծոյ, սակայն չուզեր ընծայել իր անձը, իր ես-ը, իր ազատ կամքը չուզեր խոնարհեցնել Աստուծոյ առջեւ:

Մկրտութեան պահուն, թէ չափահասի և թէ նորածինի, Սատանան ու դեւերը լսելով Յիսուսի Անունը կը սարսափին ու կը կատողին, որ իրենց շարփին պատկանողներ կը դառնան Յիսուսածին, Յիսուսապատկան՝ սեփականութիւն: Պատկանելիութիւնը իր մէջ պիտի կրէ նաեւ պարտաւորութիւններ:

Անունի մը հմայիչ ու դիւթական հզօրութիւնը:

1. Յիսուս Քրիստոսի անուան գործածութիւնը ունի գերբնական զօրութիւն--Ա. Կորնթ. Ե.4, Կող. Գ.17:

ա. «Յանուն մեր Տէր Յիսուս Քրիստոսի, երբ դուք և իմ հոգիս միասին կը հաւաքուիք մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութեամբ»:

բ. Ամէն ինչ որ ընէք խօսքով ու գործով, ըրէք յանուն Տէր

Յիսուսի՝ անով գոհութիւն մատուցանելով Աստուծոյ և Հօր:

2. Յիսուսի սրբազան անունը զօրութիւն է ինքնին, որուն, հաւատա-

ցեալ մը տեղի տալու է: Հրեաները կաղօթէին՝ Աբրահամի, Իսահակի և Յակոբի Աստուծոյն, մենք աղօթելու ենք Քրիստոսի Հօր Աստուծոյն, որ է. **«Հայր մեր որ երկինքն ես»** ա՛յս է՝ Ի՛ր Անունով աղօթելը:

Յիսուս չ՛ըսաւ. «Ինծի՛ աղօթեցէ՛ք, այլ՝ Ի՛մ անունովս ոչինչ խնդրեցի՛ք ցարդ»: Ուստի երբ սիրենք Յիսուս և Անոր սիրելի եկեղեցին, այսինքն բոլո՛ր հաւատացեալ քրիստոնեաները առանց յարանուանական խտրութեան, ինչպէս Ի՛նք կը սիրէ մեզ, աղօթած կ՛ըլլանք "Յիսուսի անունով":

Յիսուսի անունով աղօթել, ոչ միայն Անոր հաւատալով աղօթելու է, այլ՝ **ընդունելո՛ւ** է Անոր իշխանութիւնը և իրագործել Անոր պատուիրանները: Քաղաքական խորհրդարանի մը մէջ, հակառակորդ կուսակցութիւնը կը հաւատա՛յ օրուան իշխանութեան, սակայն չընդունիր այդ կուսակցութեան իշխանութիւնը, այլ շարունակ կը ֆննադատէ զայն: Յովհաննէս առաքեալ սապէս կը բացատրէ Յիսուսի հաւատալը.

**«Բոլոր զԻնք ընդունողներուն և իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու»**--Յով. Ա..12

Հոկտ. 24, 1999

Թորոնթօ

## ԵՐԿՆԱԻՈՐ ՀԱՅՐ

Յիսուս յուշի՛կ կը փալէ ցորենարտին ընդ մէջէն  
Վտակ մինչպէս կը սահի մարմանդն ի վար նազօրէն:  
Իր շարժումին հեշտ հովէն հասկերն հեզի՛կ կ'օրօրուին  
Ու վէտ առ վէտ կը պարեն շղարշ ձայնովն իր փայլին:

Սրարբած են ցորեններն ամրան արբուն արփիով:  
Ա՛հ, փմփին ի՛նչ փորձութիւն, աչփին ի՛նչ յոյզ հոգեխոով  
Յիսուս մանկան մը նման՝ կը փաղէ հասկ մը խայծուն,  
Անոր կաթովն ու հացով մարելու փաղցն իր մարմնոյն:

Եւ թէ արտի ոսկեհաս հասկերուն մէջ անհամար՝  
Իր մարմի՛նն ալ կը դառնայ ցորենի հասկ մանսպառ,  
Իբր հաց՝ նշխար առ նշխար բաշխուելու աշխարհին...

--ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

# “ՀԱ՛ՅՐ, ՆԵՐԷ՛ ԱՏՈՆՑ, ՈՐՈՎՅԵՏԵՒ ՉԵՆ ԳԻՏԵՐ ԹԷ ԻՆՉ Կ՛ԸՆԵՆ”

Ղուկ. ԻԳ.34

Վերոյիշեալ ֆաղցրայուզիչ և սիրալիր խօսքերը երբեք չեն յիշուած ոեւէ հեթանոս աստուածներու և աստուածուհիներու շրթներէն: Որովհետեւ հեթանոս աստուածները շինծու հնարքներն էին մարդ արարածին: Հեթանոս աստուածները ներկայացուցին մարդկային եսապաշտական, տոփանփի և բնական ցանկութեան կատարը, իսկ Յիսուս Որդին Աստուծոյ, ներկայացուց *գերմարդկային բարձունքը՝* Հա՛յր Աստուածը: Մինչեւ մեր փրկչին Յիսուսի սրբարար Խաչելութիւնը, մեղքերու թողութիւն կամ ներում չկար: Հին Կտակարանին *“Բաւութիւն”* redemption բառը *“Ժածկել”* կամ *“փրկագին”* տալով, Աստուծոյ հետ հաշտուիլ կը նշանակէր:

Յիսուս Քրիստոսի անձնազո՛հի խաչելութեան մէջ միայն, մարդկութիւնը կը տեսնէ ու կը ստանայ իր մեղքերուն ներում առանց փոխարժէք մը վճարելու: Ինչո՞ւ, որովհետեւ մարդ իր մեղքերուն (իր անհնազանդութեան) համար չունի որեւէ փոխարժէք: Յիսուս Քրիստոս *“Անխիղճ Պարտատէր Ծառային”*, անմահ առակով, կը նկարագրէ Հա՛յր Աստուծոյ անսահման սէրն ու գթութիւնը հանդէպ մարդկութեան: Յիսուս կը ներկայացնէ զԱստուած, ըսելով.

*«Այդ ծառային տէրը, գթալով, արձակեց  
զայն և պարտքը շնորհեց անոր»:*

Վերոյիշեալ *“պարտքը շնորհեց”* բառերը կը նշանակեն *“ջնջել”*, այսինքն ենթական այլեւս պարտք չունի ըսել: Աստուծոյ փնտոածը մարդ արարածին մէջ ո՛չ խոստովանանք է, ոչ ուխտագնացութիւն և ոչ ալ բարեգործութիւն, այլ միայն սիրել ու հաւատալ է Աստուծոյ հայրական սիրոյն ու վստահիլ Անոր նախախնամական առաջնորդութեան և հոգածութեան: Այս առարկայական իրողութիւնը կը տեսնենք մեր Տիրոջ Յիսուսի հարցումին մէջ, որ ըրաւ ուրացող Պետրոս աշակերտին ձկնորսական ծովափի աւազին վրայ, ըսելով.

*«Սիմո՛ն Յովնանի, կը սիրե՞ս զիս աւելի քան ասոնք»:*

Ինչո՞ւ **սէր** ու ո՛չ խոստովանութիւն: Որովհետեւ երբ անձ մը

կը սիրէ մէկը, նաեւ կը հաւատա՛յ անոր, կը վստահի՛ անոր, կը կատարէ՛ անոր պատուէրները, ու նոյնիսկ կը նուիրէ՛ իր անձը անոր: Յիսուս, մարդու մը երեւոյթովը, անոր շարքովը կամ դիմագիծովը չէ՛ որ կը հետաքրքրուի, այլ՝ անոր **անձնաւորութեամբ**: Յիսուս կ'ուզէ տեսնել մեր մէջ մեր էութիւնը մեր ինքնութիւնը: Յարուցեալ Տէրը կ'ուզէ արմատակա՛նօրէն փոխակերպել մարդ արարածը ու ո՛չ երեւութապէս: Ան եկաւ աշխարհ մարդ արարածը փոխակերպելու սուրբերու և հաւատարիմներու: Աշխարհի մէջ կայի՛ն բազմաթիւ կեղծ ու դիմակաւոր բարեպաշտ կարծուածներ:

Յիսուսի աղօթքին մէջ, ոչ թէ կը տեսնենք պարզ սէր ու թողութիւն դահիճներուն հանդէպ, այլ սիրոյ ու ներումի այնպիսի միասնականութիւն և առնչութիւն, որ աննախընթաց է մարդկային պատմութեան և բերթողական գրականութեան մէջ: Յիսուս ներում կը խնդրէ Հայր Աստուծմէ ոչ թէ իր սիրած աշակերտներուն համար, այլ իր *ստափուս դահիճներուն*, Ձինք խաչողներուն և Ձինք ծաղր ընող ամբոխին համար: Այս սէրն ու ներումը տեղի կ'ունենան ոչ թէ բազկաթոռի մը մէջ նստած, այլ խաչելութեան արհնլուայ ցաւերու և տառապանքներո՛ւ ներքեւ:

Յիսուսի գերբնական խօսքերը ըմբռնելու համար, ապրելո՛ւ և մասնակցելու ենք Գողգոթայի խաչելութեան տառապանքին ու ցաւին, որպէսզի մենք եւս կարենանք ներել մեր պարտապաններուն: Երանի՛ թէ ուխտաւորներ երբ կ'այցելեն Գողգոթան հոն կարենային տեսնել միայն երեք կոշտ ու արհնաթաթախ խաչեր: Մինչդեռ ի՞նչ կը տեսնէ արդի ուխտաւորը երբ կ'այցելէ Գողգոթա: Ուխտաւորներու ուշադրութիւնը կը գրաւէ աւելի փերեզակներու flee market-ը քան Զրիստոսի սրբարա՛ր Խաչելութիւնը:

Հայր Աստուծոյ անհննին Ծնունդ Յիսուս սրբանկար մը չէ՛, այլ՝ Ան ապրո՛ղ կեանք մը դառնալու է իրաքանչիւր հաւատացեալի սրտին և ամէնօրեայ կենցաղին մէջ: Ոչ Յիսուս ու ոչ ալ առաքեալները ուխտատեղիի մը խօսքը ըրած են: Իսկ աստուածայայտնիչ Վարդապետ Յիսուս ըսած է.

**«Հոգի է Աստուած, և անոր երկրպագողները պէտք է հոգիով և ծշմարտութեամբ երկրպագութիւն ընեն»:**

Աստուած ինչո՞ւ ներողամիտ է հանդէպ մեղաւորին: Ան ոչ միայն կը քաւէ մեղքը առանց (փոխարժէք) մը ստանալու մեղաւորէն, այլեւ կը **ներէ՛, կը ջնջէ՛** մեղաւորին յանցանքներն ու մեղքերը: Աստուած Եդեմի Պարտէզէն դուրս չվտարեր յանցաւորն ու մեղապարտը: Ան Մովսէսի ըսածին պէս "նախանձոտ ու վրէժխնդիր"

Արարիչ մը չէ՛, այլ սիրո՛ղ, ներող ու գթասի՛րտ երկնաւոր Հա՛յր մըն է: Յիսուս աշխարհ եկաւ ցոյց տալու, մեզ սիրո՛ղ Ճշմարիտ Աստուածը և ո՛չ մարդոց երեւակայած վախ ազդող Աստուած մը: Մշտաշող Յիսուս Իր վերջին աղօթքին մէջ, համակ փաղցրութեամբ կ'ըսէ.

**«Յաւիտենական կեանքը այս է՝ որ ծանչնան քեզ միակ ճշմարիտ Աստուած, և ծանչնան Յիսուս Քրիստոսը, զոր դուն ղրկեցիր...Քու անունդ ծանչցուցի անոնց ու պիտի ծանչցնեմ, որպէսզի այն սէրը, որով դուն զիս սիրեցիր, ըլլայ անոնց մէջ, և ես՝ անոնց մէջ»**--Յով. ԺԷ.3, 26:

Հաւատացեալին կեանքը պարտի դառնալ հանդիսարան հաւատփի, սիրոյ և ծառայութեան: Անոր ինքնակատարելագործման ուղին կ'անցնի սիրոյ մաքրագոյն փորձանքներով: Յիսուս Քրիստոսի առաքելութիւնը աստուածային սիրոյ գերագոյն արտայայտութիւնն է հանդէպ տառապակոծ աշխարհի: Աստուածային սիրոյ բխումը խոնարհելով աշխարհի ստեղծեց մարդը, նոյնպէս մարդկային կեանքը պարտ է դառնալ սրբազան խոյանք մը դէպի արարչական ակնադբիւր՝ սիրոյ, յոյսի և հաւատփի տենչով: Փետուրով մը կարելի է ժայռերը կաղապարել, եթէ փետուրը սիրո՛յ ձեռքի մը մէջն է: Քրիստոսի Մարդեղութեան խորհուրդը սիրոյ բացայայտումն է:

Սիրոյ համար գոյութիւն չունին ժամանակ, տեղ, ազգութիւն, կրօն, գաղափար, վիճակ, տարիք և գեղեցկութիւն: Կան սիրոյ և անեսականութեան առաքինութիւններ՝ գութ, ողորմութիւն, ընկերսիրութիւն, հիւրասիրութիւն, և քաջութիւն: Կ'ուզէ՞ս երթալ ուխտագնացութեան, ու կայնիլ Գողգոթայի բարձունքը և լսել Խաչեցեալին ներման աղօթքը: Մտի՛ր սենեակդ, կղպէ դուռը, և հոգեկան առանձնութեանդ մէջ խօսէ՛ Հայր Աստուծոյ, շնորհակալութիւն յայտնէ Անոր անսահման սիրոյն, ողորմութեան և քեզի շնորհած ներումին համար: Այդ նոյն պահուն պիտի իմանաս հայրական քաղձը ու քննուշ ձայնը, որ կ'ըսէ քեզի. «Եկո՛ւր ինձի, ով յոգնած և բեռնաւորուած և ես պիտի հանգստացնեմ քեզ»: Սոյն ակնթարթին պիտի ստանաս մեղքերուդ թողութիւն և հանգստութիւն ու ծնրադրած վայրդ պիտի փոխակերպուի ուխտատեղիի: Աստուած մեծ հաճոյք կ'զգայ երբ Իր հետ խօսիս սրտբացօրէն, առանձինն և մտերմօրէն:

**Յունիս 22, 2000**

**Թորոնթօ**

# ԱՂՕԹԵԼ՝ ՀՈԳԵԿԱՆ ԵՒ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՑՈՒՄ ԴԵՊԻ ԱՍՏՈՒԱԾ

**Ինչպէս աղօթելու է Աստուծոյ:**

Մարդ ինչպէս որ կը խօսի իր ծնողքին և բարեկամի մը հետ, նոյնպէս ալ խօսելու է իր Արարչին հետ: Աստուած խօսիլ շնորհեց մարդուն, որպէսզի Արարիչն ու արարածը միասին խօսակցին: Յիսուս աղօթելու և Աստուծոյ հետ խօսելու մտերմութիւնը աւելի եւս կը բացատրէ Իր աղօթքին մէջ ու կ'ըսէ.

*«Սակայն միայն անոնց համար չէ որ կ'աղաչեմ, այլ եւ անոնց խօսքով բոլոր Ինծի հաւատացողներուն համար, որպէսզի ամէնքը մէկ ըլլան, ինչպէս Դուն, Հա՛յր, Իմ մէջս և Ես՝ Քու մէջդ, որպէսզի անոնք ալ մեր մէջը ըլլան»* -- Յով. ԺԷ.20-21:

Աղօթքը հոգիին տենչն է դէպի վսեմը, սուրբը, գեղեցիկը, դէպի Աստուած: Աղօթքը սրտերու լուծեան մէջ միայն կը մրմնջուի: «Գործօն աղօթքը սէր է և գործօն սէրը՝ ծառայութիւն է ընկերին»: Աղօթքը կ'ստանայ իր լման զօրութիւնը, երբ աղօթող անձը հրաժարի բոլոր պիղծ մտածումներէ և անմաքուր խորհուրդներէ ու սրբութեամբ, ներողամտութեամբ և անձնուրացութեամբ մօտենայ իր Արարչին: Աղօթքը կ'արժանաւորուի Աստուծով, երբ աղօթողը ի՛ր հոգիին ներկայութեամբ և բառերուն իմաստը ըմբռնելով կ'աղօթէ ապաշխարանքի և զղջումի հոգիով:

Երգն ու աղօթքը անբաժան են իրարմէ: Մէկը սրտէն է, տափուկ շունչով, իսկ միւսը կը նմանի արցունքի...:

Հեթանոս ազգերու մէջ աղօթքը արջառի մը զոհագործումն էր: Հրէութեան մէջ, աղօթքը՝ արտաքին օրէնքի պարտաւորութիւնն է: Նիւթապաշտներու համար աղօթքը հինգած գաղափար մը կը սեպուի: Իսկ Քրիստոնէութեան մէջ Չաւակը մօրմէն կը սորվի, թէ ո՞վ է Աստուած, ո՞վ է Քրիստոս, ի՞նչ է սէրը, ի՞նչ է աղօթքը, ինչպէ՞ս պէտք է ապրիլ կեանքը: Վերոյիշեալ երեք մատուցումներն ալ անհրաժեշտ հոգեկան ներածութիւններ են: Տեսնենք թէ Աստուած ի՞նչ կ'ուզէ մարդ արարածէն:

Աստուած կը խօսի Եսայա մարգարէին միջոցով ու կ'ըսէ.

Բայց ես ասոր պիտի նայիմ,

Այսինքն խոնարհին և կոտրած հոգի ունեցողին

Ու իմ խօսքէս դողացողին:

Արջառ մորթողը մարդ մեռցնողի պէս է,

Գառնուկ զոհողը շուն մորթողի պէս,

Նուէր մատուցանողը խոզի արին մատուցանողի պէս,  
Կնդրուկ ծխողը կուով պաշտողի պէս,  
Իրացընէ անոնք իրենց ճամբաները ընտրեցին,  
Ու անոնց հոգիները իրենց գարշելիներէն կ'ախորժին:

**-- Եսայեայ 66.2-3:**

Ազդու և արդիւնաւոր գործօն մըն էր աղօթքը Յիսուսի կեանքին մէջ: Յիսուսի համար աղօթքը հաղորդակցութիւն և սրտակցութիւն էր Իր Երկնաւոր Հօր հետ: Հոգեկցութիւն և ընկերակցութիւն մըն էր: Հասուն հաւատացեալին աղօթքն ալ՝ **«Տո՛ւր, տուր ինձի»** էն կը վերածուի **«Ըրէ՛ զիս»**ի նման "Անառակ Որդիի": Աղօթքը զօրութիւն և կեանքերը հիմնովին փոխող վառ իրականութիւն մըն է: Կարդացէ՛ք կեանքերը Մարիամ Մագթաղենացիին և Զակէոս մաքապետին:

«Տէրունական Աղօթքը կարելի է մէկ վայրկեանի մէջ արտասանել, բայց ամբողջ կեանքի տետղութեան ճգնիլ անոր մարտակոչը յաղթանակի վերածելու համար»--Վեր. Վ. Յ. Թութիկեան:

1. "Աղօթքը անկեղծ հոգիին ինքնաբուխ պոռթկումն է":
2. Աղօթքը հեզութեան, անբարկութեան, անյիշաչարութեան և սիրոյ բխումն է:
3. Աղօթքը խնդութեան, խաղաղութեան և գոհութեան բխումն է դէպի լաւագոյնը:
3. Աղօթքը տրամութեան տարակուսանքներու և վիշտերու հրաժարադեղ սփռփանքն է:

Աղօթքը բխելու է անձի մը ներքնագոյն էութենէն: Աղօթողը անկեղծ ու յանճնառու ըլլալու է իր խօսքերուն և խնդրանքներուն հանդէպ, ու ո՛չ շատախօս:

1. Աղօթողը պարտ է զգալ Աստուծոյ մեծութեան ներկայութիւնը և անճանելի սրբութիւնը:
2. Պետրոսի աղօթքը Պայծառակերպութեան՝
3. «Պետրոս չէր գիտեր թէ ինչ կը խօսէր»: Ան աղօթեց ինչ որ բերանը եկաւ...Մարկոս Թ.4:

Աղօթք մը կ'արժեւորուի և կը լսուի երբ աղօթողը ապրած է իր խնդրանքը: Աղօթք և ապրում պարտ են միահիւսուիլ:

Աղօթքը երկխօսութիւն մըն է Աստուծոյ հետ, որուն առջեւ կը բանանք մեր սրտերն ու մեր գաղտնիքները:

Աղօթքը մարդուն ներսէն մղում մըն է դէպի Աստուած, և աւելին թռիչք մըն է: «Արդարեւ էական է որ մարդ պայքարի իր իսկ խորհուրդներուն դէմ եթէ կը փափաքի ձերբազատուիլ իր մտածումներով հիւսուած վարագոյրէն որ կը ծածկէ իր միտքը: Այդպիսով միայն ան կրնայ իր հայեացքը առանց դժուարութեան

դարձնել դէպի Աստուած, և խուսափիլ իր թափառող խորհուրդներու կամֆին հետեւելէ»--Սբ. Ամոնաս Ճգնաւոր 288-350 թուականին:

«Մարդ, աղօթքով պիտի ձգտի Յաւիտենականին, պիտի հասնի Անհասին, տեսնէ Անտեսանելին, ընդգրկէ Անսահմանը և ապրի Յաւիտենականը»:

Նահատակներո՛ւ երկիր է Հայաստան աշխարհը, սուրբերու աղօթքով թաթաւուած և մարտիրոսներու արեամբ ոռոգուած: Բիւզանդիոնի Այա-Սոֆիան ինկաւ Իսլամ մահիկի հարուածներուն տակ, սակայն Ս. Էջմիածին կը ծածանի դեռ իր խաչերով ու հաւատացեալներով և անոր խունկի անուշահոտութիւնը կը բարձրանայ երկինք հայ նահատակ պաշտպաններուն աղօթքով: Իւրաքանչիւր օրը նկատելու ենք պարգեւ մը ու բանալու ենք զայն աղօթքով:

Բազմութիւնը. «Կ'աղաչէր Յիսուսի, որ գոնէ միայն Իր զգեստի ֆղանցֆին դպչին. և անոնք որ անգամ մը դպան՝ բժշկուեցան» --Մատթ. ԺԴ.30: Յիսուս Քրիստոս ա՛յսօր ալ մեզի հետ է Իր անտեսանելի բայց իրա՛ւ Ներկայութեամբ: Դպչի՛նք Անոր ֆղանցֆին մեր աղօթքով ու հաւատքով:

«Խնդրեցէ՛ք նախ Աստուծոյ թագաւորութիւնը և Իր արդարութիւնը, և այդ բոլորը աւելիո՛վ պիտի տրուի ձեզի»--Մատթ. 2.33: Ինչո՞ւ նախ Աստուծոյ Թագաւորութիւնը և Անոր արդարութիւնը խնդրել: Ներկայ ժամանակի ընթացֆին, պայքարամարտի մէջ են Բարին ու չարը: Յիսուսի մկրտութենէն յետոյ, Սատանան յանդգնեցաւ նոյնիսկ փորձել և իր կողմը հրապուրել ԱստուածՈրդի Յիսուսը, ցոյց տալով Անոր աշխարհի բոլոր թագաւորութիւններն ու անոնց փառքը և առանց խպնելու ըսաւ. «Այս բոլորը ֆեզի պիտի տամ, եթէ գետին իյնալով երկրպագես ինձի»: Իսկ Յիսուս ըսաւ նենգաւոր փորձիչին. «Ետի՛ս գնա, (կորսուէ՛) Սատանայ, որովհետեւ գրուած է՝ թէ պիտի երկրպագես ֆու Տէր Աստուծոյդ և Չա՛յն միայն պիտի պաշտես»:

Իրաւամբ երբ ժամանակը լրանայ չարին ու գայ Աստուծոյ Թագաւորութիւնը, մարդկային խնդրանքները կատարուած պիտի ըլլան Աստուծոյ բարի կամֆովը:

1. Խնդրել կը նշանակէ "նշան առնել" "նպատակը դիտել", "թիրախը կարենալ տեսնել":

2. Քրիստոնեայի մը առաջնակարգ նպատակակէտը՝ Աստուծոյ Թագաւորութեան գալը, հասնիլը ըլլալու է:

«Խնդրեցէ՛ք, և պիտի տրուի ձեզի, փնտոցեցէ՛ք, և պիտի գտնէք, բախեցէ՛ք (*ակնածութեամբ*), և պիտի բացուի ձեզի. որովհետեւ ով որ խնդրէ՝ կը ստանայ, ով որ փնտոէ՝ կը գտնէ, և ով որ բախէ՝ պիտի բացուի անոր»--Մատթ. Է.7: **"Keep on asking"**

## **Ի՞նչ է աղօթքը:**

Աղօթքը ինֆնասարքագրութեան լաւագոյն առիթն է: Աղօթքը զէնֆն է անզէն հաւատացեալին: Աղօթքը նման ձգողական զօրութեան անտեսանելի ազդեցութիւն մըն է: Աղօթքը հասնիլ է Գերբնականի ներկայութեան, որ արդէն հոն է Իր սիրով ու ողորմութեամբ: Աղօթքը վարժութիւն մը պէտք է դառնայ, զօրաւոր պահանջ մը, ոչ թէ միայն նեղութեան և տագնապի միջոցին, այլ նաեւ փառաբանութեան:

1. Աղօթքը աւելի մտիկ ընել է լռելեալն, քան խնդրանք և աղերս:

2. Աղօթասաց դիրքաւորումը հոգեկան վարժութիւնն է, որ ենթական իր հոգեկան էութեան մէջ շարունակ կ'աղօթէ՝ հաղորդութեան և յարաբերութեան մէջ կը պահուի Աստուծոյ հետ:

Աղօթքը վսեմ ու վեհ յարաբերութեան ճամբայ մըն է, որ կը կամրջէ մարդը աշխարհէ դէպի երկինք՝ դէպի Աստուած:

1. աղօթքով մարդ դէմ յանդիման կու գայ իր «ես»ին հետ:

2. աղօթքը ինֆնատեսութեան միջոցն է:

Աղօթքով կեդրոնացնենք և սելեռենք մեր մտածումները, տարակուսանքները և կասկածները առ Աստուած զղջումի և ապաշխարութեան հոգիով: Ի պահանջեալ հարկին, պահեցողութեամբ՝ Աւետարանի ոգին, Յիսուս Ինք 40 օր ծոմ պահեց: Մարմինը կը կատարէ ա՛յն, ինչ որ հոգին կը պատուիրէ անոր: Երբ մարմինը տիրապետէ հոգիին, այդ մեղանչում է: «Աղօթքը շարժումն է այն չուանին՝ որուն ծայրը կապուած զանգը երկնքի մէջ կը հնչէ» ըսած է Լամբրոնացի հայրապետը:

Աղօթքը վսեմ ու վեհ յարաբերութեան ճամբայ մըն է, իրա՛ւ և անտեսանելի որ կը կամրջէ աշխարհէ դէպի երկինք ու մարդէն դէպի Աստուած:

## **Ինչու աղօթել**

Աղօթքը կը ծնանի հերոսներ, կը կերտէ ազատարարներ և կը դարբնէ նուիրեալներ, կը պարգեւէ յաւերժացողներ: Աղօթքը հոգւոյն հացն է: Մեղաւոր ու սխալական ըլլալու գիտակցութեամբ է, որ աղօթքը իմաստ կը ստանայ:

1. Մեղքի գիտակցութիւնը ունի հետեւեալ հոգեբանական զարգացման աստիճանները,

ա. Ինքզինք ֆննադատել,

բ. ինքզինք պատժել,

գ. ինքզինք ուղղել:

2. Մարդ այն միակ էակն է աշխարհի վրայ, որ ունի ինքը իր գիտակցութիւնը՝ խիղճը:

## **Աստուած իրապէս կը փափափի լսել մեր աղօթքը:**

Գոհունակութեան զգացումը Աստուծոյ համար ո՛չ միայն հաւատացեալին մարդկա՛յնօրէն արտայայտուիլն է, այլ լսել Իր արարածին մտահոգութիւնը, զգալ անոր սրտին խռովքը և աղօթքի ընթացքին խնդրել որ Աստուծոյ թագաւորութիւնը գայ, և Անոր կամքը ըլլայ:

«Ծանիր զե՛զ», դիրին չէ, ոչ ալ հաճելի մարդու համար: Դուն բեզ չես տեսներ այնպէս՝ ինչպէս որ ես, այլ այնպէս՝ ինչպէս որ կ'ուզէիր ըլլալ: Աղօթքի միջոցով պիտի տեսնես դուն զեզ, այնպէս՝ ինչպէս որ ես: Աղօթքի հիմնական դէպք իրողութիւնը ա՛յն է, որ Աստուած Իր ամենագէտ իմաստութեամբ կը լսէ ու կը պատասխանէ ենթակային աղօթքը:

Աղօթքի ընթացին, սուրբը արեւ կը հաւաքէ, որպէսզի յետոյ սփռէ զանոնք իր ժողովուրդին մէջ իբր լոյս և իբր ուրախութեան ծաղիկ: Աղօթքի պահը այն սրբազան պահն է, որ հնարաւոր չէ բացատրել, այլ պէտք է **սպասել, զգալ և ապրիլ:**

Հրէական բոլոր աղօթքները կ'արտայայտուին յոգնակիով: Մարդ՝ յոգնակի աղօթելով իր անձը կը միացնէ համայնփին: Պատկանելիութեան զգայնութեան վայելքը կեդրոնացած է եկեղեցւոյ պաշտամունքային հաւաքականութեան ընթացքին և միասնական աղօթասացութեան, Աղօթասիրութեամբ և պահեցողութեամբ:

Կը հիանանք, կը սփանջանանք մեր նախնեաց հաւատքի ուժին և հզօր կամքին, որուն առջեւ ժայռերն անգամ կը բացուէին, ու կը վերածուէին աղօթավայրերու և ուխտատեղիներու՝ հոգեկան ովասիսներու: Յիսուս կը նայի Իր աշակերտներուն վրայ ու երկար խոկումէ մը յետոյ կ'ըսէ անոնց. «Մինչեւ հիմա Իմ անունովս ոչինչ խնդրեցիք. խնդրեցէ՛ք (keep on asking) և պիտի ստանաք, որպէսզի ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ»--Յով. ԺԶ.24: Առ Աստուած նայիլը աղօթել է արդէն...:

Գերագոյն աղօթքը լուծեամբ Աստուծոյ առջեւ խոնարհիլ է, երբ մարմինը լուռ է հոգին կ'աղօթէ: Աստուած Ինքզինք կը յայտնէ հոգիով խոնարհներուն և փոքրիկներուն, ոչ փոքրոգիներուն: Խաչեցեալը մեզ կը կանչէ աստուածգիտութեան Լոյսին: Աղօթելով կը բացուի՛նք երկնային հրաշագործ Լոյսին: Մաքանելով մեր հողաշէն ծակատագրին դէմ, խնդրելով Յիսուսէ պահենք մեր սրտերը մաքուր, ու տառապելով հանդերձ աշխարհի մէջ, նայինք ու սեւեռենք մեր աչքերը երկնաճաճանչ Լոյսին: Միայն աղօթքով կրնանք միացնել մեր կեանքերը մտածումները և ապրումները երկնային հրաշագործ Լոյսին:

Երկիրն ու երկնայինը, նիւթեղէն մարդն ու Իմանալին և

Պաշտելին իրար միացնող թելը **խորհրդապաշտութիւնն** է՝ աղօթել երկնաւոր Հա՛յր Աստուծոյ: Որովհետեւ աղօթելու այս փորձառութեան հիմնական էութիւնը անմատչելի է բնական մարդուն: Մարդկային (հողաշէն) ծանաչողութեան, զգայական և տրամաբանական միջոցները անհաս են ըմբռնելու զայն: Ուստի, մարդ արարածին կը մնայ միակ միջոց մը որ կը կոչուի սփանչացումի վիճակ (ecstasy) մը պաշտամունքի ժամուն: Այս հոգեկան յափշտակութեան մէջ կը նահանջէ մարդուն երկրածի՛ն ինքնագիտակցութիւնը և ենթական կը նոյնանայ ճշմարտութեան, Բաճարձակին՝ Աստուծոյ հետ:

Վստա՛հ եմ, որ մեզմէ շատեր ունեցած են այսպիսի աղօթքի ժամեր, որմէ յետոյ զգացած ենք որ մեր աղօթքը և խօսակցութիւնը իմացուեցաւ Աստուծոյ կողմէ, որովհետեւ գերբնական զգացում մը ունեցանք մեր աղօթքի պահուն: Այդ գերբնական զգացումը՝ դպչի՛լն էր անշօշափելի Հոգի՛ Աստուծոյն:

Քրիստոնէութիւնը, Յիսուսի աշխարհ բերած աստուածայայտ-նութիւնն է: Հեթանոսական կամ կրօնական ծիսակատարութիւն մը չէ՛: Լծացած ծանծաղ ծախճախուտ մը չէ՛, այլ՝ հզօր ջրվէ՛ժ մըն է ապրո՛ղ խօսուն և կենարար: Յիսուսի կանչը և հրաւերը աշխարհի, ո՛չ թէ մարդը շտկել է, կարկտել կամ ետ ադամի նման ընել է, այլ մեզ **աստուածացնե՛լ** է, մեզ աստուածճանաչումի՛ հասցնել է: Քրիստոնէական կեանքը արշա՛ւ մըն է հողաշէնութենէ դէպի հոգեկանի: Կարդանք Պօղոս առաքեալի վազքը թէ ան ինչպե՛ս կը վազէ.

*«Արդ, ես ծիշդ աշրպէ՛ս կը վազեմ. ո՛չ անստուգութեամբ. չեմ մրցիր այնպէս՝ իբրեւ թէ հով ծեծէի, այլ կը չարչարեմ իմ մարմինս և կը հնազանդեցնեմ զայն, որպէսզի չըլլայ թէ ես ինքս ոչ պիտանի նկատուիմ այն բանին, զոր Բարոզեցի ուրիշներուն»* -- Էջմիածնայ թարգմանութիւն Ա Կոր. 9.26:

«Ես այսպէս կը վազեմ, ահա, և ո՛չ թէ անորոշ ուղղութեամբ. կը մրցիմ կռփամարտիկի մը պէս, որ օդը չի ծեծեր: Բայց ինքզինքս սեղմումներու կ'ենթարկեմ ու կը զսպեմ, որպէսզի չըլլայ թէ ես ինքս մրցանակէն զրկուիմ, ես՝ որ ուրիշներուն կը Բարոզեմ» -- Անդիլիասեան թարգմանութիւն:

**Մայիս 16, 2001**

**Թորոնթօ**

## ՕՐ ԶԷ ԵՂԵՐ...

Տարիներու մէջ բազում չէ եղեր մէ՛կ օր անգամ,  
Ուր աղօթքի խորանին, Աստուծոյս դէմ արարիչ,  
Ծունկի չգամ զաւկաբար, բազկատարած հոգեթռիչ,  
Սիրտըս անյագ պաշտումով ամբառնալու զերդ սկիհ:

Օր չկայ, ուր չհակեմ ճակատըս իր Գիրքն ի վար,  
Իմ շրթներով ըմպելու բաժակն անոր մեղրածոր,  
Իր Հոգիով պեղելու թափուն գանձերը անոր,  
Եւ տեսնելու էջերուն մէջէն երկինքը դրախտ:

Օ՛ր չըլլար, որ Յիսուսի չպատմեմ սիրտս անառակ,  
Գայթումներով իր յիմար ու բիծերով իր տխուր,  
Իր մեղսահոծ խորշերով ու մութերով թափթափուր,  
Եւ Ան՝ արեամբն իր բուժիչ՝ զիս չմաքէ որպէս ձիւն:

Օր չկայ, որ չփալեմ ես Փրկչիս հետ կեանքն ի վեր,  
Ճամբաներէն իր՝ ոմանք փշուտ, ոմանք ծաղկաւէտ.  
Օր չէ անցեր, որ հոգւոյս մէջ չխօսիմ ես իր հետ  
Եւ չլսեմ ձայնն իր մունջ, այլ բիրեղի նման ջինջ:

Տարիներու մէջ բազում չէ եղեր մէ՛կ օր անգամ,  
Ուր զաւակի պէս չերթամ Հօ՛րըս վերին, շնորհատու  
Իր Աջին լոյս օրհնութեանց միւռոնովը օծուելու  
Եւ հայցելու՝ «Եկեսցէ՛ Արքայութիւն քո սիրոյ,

Մէն մի սրտի մէջ, ո՛վ Տէր, սկսեալ ի՛մ իսկ սրտէս...»

--ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Յ. Տ. 2001

## ԱՂՕԹԵԼ ՅԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆՈՎ

Յով. ԺԶ.24

Յիսուս Քրիստոս Իր դատապարտութեան նախօրեակին, շատ հաւանական է Սուրբ Հաղորդութենէ վերջ, քաջալերելու համար աշակերտները, իսկաժ է հետեւեալ պատուէրը. «Ճշմարտութեամբ կ'ըսեմ ձեզի թէ՛ իմ անունովս ի՛նչ որ խնդրէ՛ք Հօրմէն՝ պիտի տայ ձեզի: Մինչեւ հիմա՛ ոչինչ խնդրեցի՛ք իմ անունովս. խնդրեցէ՛ք՝ ու պիտի ստանա՛ք, որպէսզի ձեր ուրախութիւնը լման ըլլայ»:

Ինչո՞ւ մեր խնդրուածքները ընելու ենք Աստուծոյ Յիսուսի անունով: Որովհետեւ վաղ անցեալին մէջ ապրողները կը հաւատային, թէ անձի մը տրուած անունը անոր նկարագրին և իսկութեան զօրութիւնը կը նշանակէր: Ուստի Յիսուսի անունով աղօթել, կը նշանակէ **ՃԱՆՃՆԱԼ** Ձայն ու Անոր զօրութիւնը: Ծանջնալ, գիտելիքներ ամբարել չէ միայն, այլ ծանջնալ է ենթական: Զծանջնալով պաշտելը՝ կոապաշտութիւն է, և չի կրնար գոհացում տալ աղօթողին: Յիսուսի միջնորդական և բարեխօսական աղօթքին մէջ (Յով. ԺԷ.3) կը կարդանք.

**«Յաւիտենական կեանքը այս է՝  
որ ծանջնան քեզ միակ ճշմարիտ Աստուած,  
և ծանջնան Յիսուս Քրիստոսը, զոր դուն ղրկեցիր»:**

Յիսուս կ'ըսէ. «Հաւատացէ՛ք Աստուծոյ, հաւատացէ՛ք նաեւ ինձի»--ԺԴ.1: Ի՞նչպէս կարելի է հաւատալ մէկու մը եթէ չծանջնանք զայն: Երբ ըսենք թէ մենք այսինչը կը ծանջնանք, ըսել կ'ուզենք թէ գիտենք անոր անունը, անոր հետ յարաբերութեան մէջ ենք, ու կրնանք անոր մասին վկայել: Մեզ սիրող Տէրը Յիսուս եւս կ'ուզէ որ մենք ծանջնանք Ձինք, վստահի՛նք Իր բարեխօսութեան ու մեր աղօթքին մէջ, առ Հայր երկնաւորը, մեր աղերսը ներկայացնենք Ի՛ր անունով: Նոյնիսկ Պօղոս առաքեալ եւս կը պատուիրէ իր գործակից Տիմոթէոսին ըսելով. թէ Աստուած կ'ուզէ որ բոլոր մարդիկ փրկուին ու հասնին ճշմարտութեան գիտութեան.

**«Քանզի կայ մէ՛կ Աստուած, նաեւ մէ՛կ Միջնորդ Աստուծոյ  
և մարդոց միջեւ. Մարդը՝ Յիսուս Քրիստոս»--1 Տիմ. Բ.5:**

Ինչպէս ընկերային կեանքի և միջազգային առեւտրական գործի մէջ մարդ անհատը կամ կառավարութիւններ կարիքը ունեցած են միջնորդի, մը որպէսզի իրենց գործը յաջողեցնեն:

Նոյնպէս ալ հոգեկան աշխարհի մէջ հաւատացեալներ կարիք ունին Միջնորդի մը երկնքի մէջ, որովհետեւ իրենք ապրող վկաներն են երկրի վրայ Անո՛ր որ զիրենք դրկեց վկայելու: Պետրոս առաքեալ իր փորձառական իմաստութեամբ կ'ըսէ.

**«Չկայ փրկութիւն ուրիշ մէկու միջոցով, որովհետեւ երկնքի տակ չկայ մարդոց տրուած ուրիշ անուն, որով կարելի ըլլայ մեր փրկութիւնը»** -- Գործք. Դ.12:

Յիսուս Ինքզինք ընծայած է օգնելու մարդկութեան, որպէս Բարեխօս և Միջնորդ: Մենք ալ որպէս հաւատացեալ քրիստոնեաներ որքա՞ն կը գործածենք Յիսուսի անունը որպէս Միջնորդ, երբ կ'աղօթենք Հա՛յր Աստուծոյ: Եթէ չենք գործածէր Յիսուսի անունը, այդ կրնայ եղած ըլլալ թերացում կամ Յիսուսի հետ շատ մօտէն յարաբերութիւն չունեցող մը: Յիսուս կը փափաքի մտերմանալ մեզի հետ: Ուստի հրաւիրենք Չայն մեր մէջ ու ճանչնանք Անոր սերը մեզի հանդէպ:

Մինչեւ մեր օրերը, Հրեաները կաղօթեն Աստուծոյ, Աբրահամի, Իսահակի և Յակոբի անունով: Ըստ մեր Փրկիչ Յիսուսի հրահանգին, Քրիստոնեաներ եւս աղօթելու են Հօր Աստուծոյ, և իրենց խնդրանքը ներկայացնելու են Յիսուսի՛ Անունով: Այս խնդրանք աղերսը մեծ տարբերութիւն մը ստեղծեց առաքեալներու օրով հրէական աւանդապաշտութեան մէջ: Հետեւաբար Հրեայ Քահանայական դասը սկսաւ հալածել առաքեալները, պաշտպանելու համար իրենց ազգայի՛ն աւանդութիւնն ու Մովսէսի տուած Օրէնքը:

Կարդանք Գործք Առաքելոց երրորդ գլուխը:

«Պետրոս և Յովհաննէս տաճար կ'ելլէին իններորդ ժամու աղօթքին համար: Եւ ի մօրէ կաղ ծնած մարդ մը կար: ...Ան տեսնելով Պետրոսը և Յովհաննէսը որոնք տաճար կը մտնէին՝ կ'աղաչէր որ ողորմութիւն ստանայ: Պետրոս, Յովհաննէսին հետ, նայեցաւ անոր և ըսաւ. "Մեզի՛ նայէ": Ան դարձաւ անոնց և կը յուսար բան մը ստանալ անոնցմէ: Եւ Պետրոս ըսաւ. «Արժաթ և ոսկի չունիմ, բայց ինչ որ ունիմ՝ բեզի կու տամ զայն. **յանուն Նազովրեցի Յիսուս Բրիստոսի՛** ոտի՛ ելիր և փալէ՛»: ...Ան վեր ցատկեց և սկսաւ փալել ու անոնց հետ տաճար մտաւ. և կը փալէր, կը ցատկէր ու կ'օրհնէր զԱստուած»:

1952 թուականին որպէս զբօսաշրջիկ Գանատա մտայ որպէսզի կարենամ այս երկրին փառաբացին դառնալ: Ըրածս ապօրինի ձեւ մըն էր, սակայն ուրիշ կերպով անկարելի էր ինձ համար: Միջնորդի մը պէտք ունեցայ, որ զիս ներկայացնէ ներգաղթողներու

գրասենակի պաշտօնեային: Երկու ժամ Անկլիզան եկեղեցւոյ Dr. Judd-ին միջնորդութեամբ մեր խօսակցութեան արդիւնքը եղաւ, որ ես անարժան էի Գանատա մնալ և նոյնիսկ հարցարանը լեցնելու արտօնութիւնը չունեցայ: Աւստրալիոյ Եպիսկոպոս Goodwin Hudson, որու ընկերակցութեամբ Լոնտոնի պարտէզներու մէջ ամիս մը բացօթեայ ֆարոգութեամբ զբաղած էի, ինծի հասցէ մը տուած էր հանդիպելու տիկնոջ մը Օթաւայի մէջ, որ կրնար իմ Գանատա մնալուս միջնորդել: Նամակով մը իմացուցի այս տիկնոջ իմ պարագաս: Նամակ մը ստացայ որուն ամբողջութիւնը միայն մէկ նախադասութիւն մըն էր: Այս տիկնոջ նամակին մէջ հեռաձայնի թիւ մը կար, ու կը յանձնարարէր ինծի, որ հեռաձայնեմ այդ թիւին: Թորոնթոյի հայերը զգուշացուցին զիս, թէ կարելի չէ հեռաձայնել: Ծաբաթ մը սպասելէ յետոյ փորձեցի հեռաձայնել այդ թուին և ստացած պատասխանս կ'ուզեմ անգլերէն ըսել. "My friend Mr. Noradunkian where have you been, we are waiting for you a whole week". Հարցուցի իրեն թէ կրնայի զինք տեսնել, պաշտօնեան ըսաւ թէ անմիջապէս երթամ զինք տեսնելու:

Երբ իր մօտ գացի, աթոռ մը առաւ և իր գրասէղանին բով դնելով ըսաւ ինծի սիրալիւր ընդունելութեամբ թէ Գանատան ինծի նման մարդոց կարիքն ունի: Հազիւ խօսելու սկսած էինք, ըսաւ ինծի, «այս վայրկեանէն սկսեալ դուն Գանատահպատակ ես, ու եթէ ոեւէ մէկը, ոստիկան մը կամ կառավարական պաշտօնեայ մը ֆեզ նեղէ, անմիջապէս ինծի հեռաձայնէ» և իր գրասենեակին և թէ իր տանը հեռաձայնին թիւը տուաւ:

Ինծի դրկուած այդ մէկ համեստ նախադասութեան մէջ գտնուած անունն ու հեռաձայնի թիւը, իմ և իմ ընտանիքիս Գանատա հաստատուելու ամբողջական իշխանութիւնը ունէր: Եթէ ես Հայ գորգավաճառներու խօսքը մտիկ ըրած ըլլայի ու չհեռաձայնէի, Գանատա հաստատուելու իրաւունքէս զրկուած պիտի ըլլայի: Եթէ երկրաւոր մարդոց անունը գործածելով կարելի է գոց դռները բանալ, որքա՞ն արեւի հզօր է Յիսուս Քրիստոսի անունը:

Յիսուս Քրիստոս ո՛չ թէ նամակով մը իմացուց գործածել Իր հրաշագործ անունը, այլ անձա՛մբ եկաւ աշխարհ, նուիրելու մեզ Իր Անունը, միջնորդութիւնը և բարեխօսութիւնը առ Հա՛յր Աստուած: Մեզի կը մնայ ըլլալ խոնարհ և իմաստուն, գործածելու և շնորհակալ ըլլալու իրեն, որ մեզի նման մեղաւորները թէ կը սիրէ և թէ Իր անունը գործածելու իրաւունքը տուած է:

**Մայիս 13, 2000**  
**Թորոնթօ**